

Սուսաննա Գ. Հովհաննիսյան
Բանաս. գիտ. դոկտոր

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտյան Հայաստանում Հովհ. Թումանյանի
1914 թ. նոյեմբեր 17- ից - դեկտեմբեր 12-ի օրագրային
գրառումների հիման վրա*

Բանալի բառեր - Թումանյան, Արևմտյան Հայաստան, Առաջին աշխարհամարտ, հանձնախումբ, կամավորական խմբեր, ռազմի դաշտ, ռուս զենքավորներ, բռնաբարություններ, թալան, Բայազետ, Դիադին, Զետկան:

Թումանյանի անձնական ձևատառերի և հարազատ ժողովրդի ողբերգության միաձուլվելու իրողությունն առավել ցայտուն դրսևորվեց բանաստեղծի 1914-1915 թթ. ազգային-հասարակական գործունեության ընթացքում:

1914 թ. հուլիսի 14-ին Թումանյանը գնացել էր Ծաղվեր (Զաղվեր) ամառանոց, երբ հաջորդ օրը աշխարհով մեկ տարածվեց Առաջին աշխարհամարտի առիթ դարձած ավստրո-հունգարական գահի ժառանգորդ Ֆրանց-Ֆերդինանդի սպանության գույժը, և մեկ շաբաթվա ընթացքում Ավստրո-Հունգարիայի՝ Սերբիային (հուլիսի 19), Գերմանիայի՝ Ռուսաստանին (հուլիսի 21) ու Ֆրանսիային (հուլիսի 22) պատերազմ հայտարարելուց հետո ամառանոցում խուճապ սկսվեց՝ Նամակագրական կապը Կովկասի քաղաքների միջև դարձել էր անկասկած:

Այդ օրերին Ստեփան Լիսիցյանին ուղղված նամակում պոետը գրում էր. «Էստեղ էլ ահ ու սարսափ ընկավ, ամառանոցավորների մի մասը հեռացավ երկուրդից, և դեռ էլի գնացողներ կան ...Ամեն օր էստեղ էնպես նոր-նոր տրամադրություններ են ստեղծվում ու էնպես նորություններ են գալիս մեկը մյուսից հուզիչ, որ երբեմն մարդիկ գիշերը չեն կարողանում քնել»:²

*Հոդվածն ընդունվել է տպագրության 5.05.2014:

1 Ամսաթվերը նշում ենք **հին տոմարով**, քանի որ այդ շրջանում թե՛ Թումանյանը իր օրագրերի ամսաթվերում, և թե՛ լրագրերը առաջնորդվել են հին տոմարով: Նոր տոմարով պատերազմը սկսվեց հուլիսի 28-ին, երբ Ավստրո-Հունգարիան պատերազմ հայտարարեց Սերբիային, իսկ Ռուսաստանը պատերազմի մեջ մտավ օգոստոսի 1-ին (հ.տ. հուլիսի 19-ին):

2 **Հովհաննես Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով (այսուհետև՝ **Թումանյան**, ԵԼԺ), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 1999, հատ.10, էջ 209: Անթվակիր նամակի բնագրի

Հ (ԺԲ) քառի, թիվ 2 (46) ասորի-հունի, 2014
ՎԼԿԱ համահայկական հանդես

Այդ օրերին Թումանյանի ապրած ամենօրյա տագնապներն ու մտահոգությունները տեղ են գտել նրա **օրագրային գրառումներում**: Իսկ քիչ անց՝ 1914-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ռազմադաշտի վերածված Արևմտյան Հայաստանում, մասնավորապես Էրզրումի նահանգի Բայազետի գավառում, Ալաշկերտի, Դիադինի գավառակներում և այլ վայրերում բանաստեղծի կատարած գրառումները ունեն պատմաճանաչողական մեծ արժեք: **Դրանք ականատես գրողի անմիջական վկայություններ են, չեն գրվել որևէ մեկի կամ որևէ հաստատության հրահանգով, նախատեսված չեն եղել տպագրության համար**, այնպես, ինչպես Շիրվանզադեի «Պատերազմի վայրերից» հուշ-գրառումներն էին արվել «Кавказское слово» լրագրի հանձնարարությամբ: Պարզապես, Թումանյանը սովորություն ուներ ամենուր գրի առնել այն, ինչը կարևոր էր համարում. ավելի հաճախ արձանագրում էր միայն փաստը, ուղղակի մեջբերում որևէ մեկի խոսքն ու կարծիքը՝ իր ընկալումն ու մեկնաբանությունները թողնելով ապագային³:

1914 թ. օգոստոսի 18-ին Թիֆլիսից իր ընկերոջը՝ Փիլիպոս Վարդապարյանին⁴, Թումանյանը գրում էր. «Ամենքս կլանված ենք պատերազմով: Ամենքս դարձել ենք ռազմագետ. իհարկե, ես ոչ մի կասկած չունեմ մեր հաղթանակի վրա արևմուտքում, որ ժամանակի ու մեծ զոհերի խնդիր է միայն: Իսկ արևելքում ոչ մի դեպքում չէի ցանկանալ, որ պատերազմ լիներ: Դա կլիներ, հիրավի, մեր վերջին տագնապն ու դժբախտությունը համազգային, բայց քանի որ առանց դրան էլ հայկական կամ, ավելի ձիշտը, տաճկահայկական հարցը լուծվում է Գերմանիայի պարտությամբ – էստեղ մեզ համար ավելորդ աղետ կլիներ»⁵:

Բայց Թումանյանը վստահ էր, որ Թուրքիան պատերազմի մեջ կմտնի և այդ ճանապարհով կփորձի լուծել հայկական հարցը, ինչն իր հերթին Կովկասում կհանգեցնի ազգամիջյան ընդհարումների՝ «համազգային դժբախտության»⁶: Եվ երբ 1914 թ. հոկտեմբերի 16-ին թուրք-գերմանական նավատորմը հարձակվեց Թեոդոսիայի վրա, փաստորեն պատերազմը Թուրքիայի ու Ռուսաստանի միջև դարձավ անխուսափելի: 1914 թ. հոկտեմբերի 29-30-ին Թուրքիան Անտանտի երկրներին ջիհադ հայտարարեց, ի պատասխան որի Ռուսաստանը նոյեմբերի 2-ին պատերազմ հայտարարեց Թուրքիային:

Արդեն 1914 թ. նոյեմբերի սկզբներին Թումանյանը Բաքվում էր, ուր մեկնել էր հավանաբար հոկտեմբերի վերջին օրերին: Նպատակը կամավորական շարժմանը նպաստելու համար հանգանակություն կազմակերպելու գործն էր, Արևմտյան Հայաստանի ազատագրության հանդեպ հավատ ու լավատեսություն ներշնչելու, սպասվող դժվարություններին դիմանալու և պայքարելու ուժ հաղորդելը⁷:

ծանոթագրության մեջ այն գրելու մոտավոր ժամանակը գրականագետ Լուսիկ Կարապետյանը նշում է՝ «1914 թ. հուլիսի երրորդ տասնօրյակ»:

3 Թումանյանից մեզ են հասել Պետերբուրգի բանտում, Արևմտյան Հայաստանում, Էջմիածնում և այլ վայրերում գրված օրագրեր, որոնցից յուրաքանչյուրը հայ ժողովրդի պատմության կենդանի վավերագրեր են ու դեռևս անհրաժեշտ ուշադրության չեն արժանացել հետազոտողների կողմից: Առաջին աշխարհամարտի սկզբում Արևմտյան Հայաստան՝ ռազմի դաշտ կատարած առաջին ուղևորության ընթացքում գրված Թումանյանի օրագիրը առաջին անգամ հրատարակել ենք բանաստեղծի «Երկերի լիակատար ժողովածուի» գիտական երկրորդ հրատարակության «Ուսումնասիրություններ, օրագրեր և այլ նյութեր» ընդհանուր խորագիրը կրող 8-րդ հատրի «Օրագրեր և ինքնակենսագրական նոթեր» բաժնում՝ «Ռազմաճակատ կատարած առաջին այցելության օրագիր (1914)» վերնագրով: Տե՛ս Թումանյան, ԵԼԺ, հատ. 8, էր., «Գիտություն» հրատ., 1999, էջ 349-391: **Թումանյանի գրառումները կատարվել են Էջմիածնից դուրս գալուց հետո՝ նոյեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 12-ը՝ Թիֆլիս վերադառնալու նպատակով Սարիամիշից նրա հեռանալու օրը**:

4 Վարդապարյան Փիլիպոս Հակոբի – հրատարակիչ, մշակութային գործիչ, Թումանյանի մտերիմ բարեկամն ու մեկնաաղ– 1858 (Գողթան, Ներքին Ազգույն) – 01.09.1935 (Թիֆլիս):

5 Թումանյան, ԵԼԺ, հատ. 10, էջ 214:

6 Նույն տեղում, էջ 214:

7 Անկախ իր նպատակից՝ Թումանյանի այցը չէր կարող անտարբեր թողնել Բաքվի հայ անունկներին: Բաքվի «Արև» թերթի նոյեմբերի 3-ի «Հովի. Թումանյանի այցը հայոց դպրոց»

Բանաստեղծի՝ Բաքվում գտնվելու լուրը Թիֆլիսի թերթերում հրատարակվում է միայն նոյեմբերի 7-ին. ընդ որում, թղթակիցներն աշխատում էին շրջանցել նրա այցելության իրական՝ քաղաքական նպատակները և նկարագրում էին միայն դպրոցում ունեցած ընդունելությունը⁸: Գրողի ներկայությունը խանդավառություն է առաջացնում Բաքվի հայության շրջանում, և հաջողվում է ինչպես հանգանակության, այնպես էլ կամավորական ջոկատներ ձևավորելու գործը։ **Բաքվից կամավորական մի մեծ խումբ նոյեմբերի 5-ին ուղևորվում է ռազմի դաշտ**⁹:

Սակայն պատերազմի հենց սկզբից էլ Կովկասում Ռուսաստանի վարած քաղաքականությունը երկդիմի էր։ Մի կողմից փոխարքայի շուրթերից հնչում էին Արևմտյան Հայաստանի ու հայության ձակատագրի հետ կապված բազում խոստումներ, մյուս կողմից՝ ռուսական պաշտոնական շրջանակներում տարածվում էին գրպարտություններ ու բամբասանքներ հայրենիքի համար անձնագոհաբար կռվող կամավորների մասին. արվում էր ամեն ինչ՝ անվանարկելու համար և հայ զինվորին և հայ բնակչությանը։

Ցարական իշխանությունների համար հայ զինվորները անջատողականներ էին՝ «ավտոնոմիստներ»։ Եվ որքան հայ կամավորները ռազմաձակատում հաղթանակների էին հասնում, այնքան մեծանում էին ցարական վերնախավի և ռուս գեներալների մի մասի հակահայկական տրամադրությունները։ Բանբասանքներ էին տարածվում, թե իբր՝ հայ կամավորները, վիրավոր ձևանալով, փախչում են անանդաբար, իսկ սահմանագլխի հայ գյուղերը պատսպարում են նրանց և այլն։ Եվ այս ամենը տեղի էր ունենում հայ կամավորական խմբերի՝ ռուսական զորքերին միանալուց ընդամենը մեկ շաբաթ անց՝ 1914 թ. նոյեմբերի սկզբին։

Ուստի Վեհափառը կարգադրում է ժամանակի նշանավոր հոգևոր գործիչներին՝ Թիֆլիսի և Արարատյան թեմի առաջնորդներ Մեսրոպ Տեր-Մովսիսյան և Խորեն Մուրադբեկյան եպիսկոպոսներին, մեկնել պատերազմի դաշտ՝ «հայ զինվորներին օրհնելու և ոգևորելու»¹⁰։ Նրանց միացած Թումանյանի առաջին ուղևորությունը ռազմաձակատ, հայ կամավորի և առհասարակ հայոց արժանապատվության համար պայքարի մի դրվագ էր։ Ռազմական գործողությունների թեժ պահին նա մեկնում էր ռազմի դաշտ, նետվում հրդեհների մեջ, այս անգամ՝ փրկելու հայ կամավորի արժանապատվությունն ու պատիվը, մխիթարելու ժողովրդին, վերահաս աղետներին դիմագրավելու ուժ հաղորդելու և ի վերջո՝ հասկանալու ռուսական քաղաքականության ներքին իմաստը։

Հայոց Ազգային բյուրոյի նախագահ Սամսոն Հարությունյանը Թումանյանի մտերիմներից էր և այդ ուղևորության համար վատառողջ թոքերով բանաստեղծին է տրամադրում իր վերարկուն։ Ռազմի դաշտ մեկնող հանձնախմբի մասնակիցների ընտրությունը կատարում է Վրաստանի և Իմերեթիայի հայոց հոգևոր թեմի առաջնորդ և Ազգային բյուրոյի պատվավոր նախագահ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, ով հոգևոր դասից գրողի անձնական մտերիմների շարքում առաջինն էր։ Այսպես, հայ հոգևոր գործիչներից ու մտավորականներից ձևավորվում է ռազմաձակատ մեկնող խումբը, որի կազմում էին **Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, Թումանյանը, Շիրվանզադեն, Խորեն եպիսկոպոս Մուրադբեկ-**

թղթակցությունից տեղեկանում ենք, որ բանաստեղծը եղել է Բաքվի հայկական Հոփսիսյան դպրոցում։ Նրա այդ օրվա ելույթից մամուլում գրեթե բառացի բերված հատվածը առայսօր դուրս է մնացել Թումանյանի 10 հատորյակից։ «Արև»-ի թղթակցի խոսքերով՝ դիմելով մանուկներին՝ Թումանյանն ասել է. «Հայ գրողին, հայ բանաստեղծին այսօր ոգևորողը հայ դպրոցը պիտի լինի։ Աված է՝ տղա կրթել նշանակում է մարդ կրթել և աղջիկ կրթել, նշանակում է մայր կրթել, ընտանիք կրթել...մայրենի խոսքը պիտի կենդանի պահել միշտ։ Ձեր ուսուցիչները ձեզ առաջնորդում են ոչ թե երկրներ, հողեր գրավելու, այլ հոգեկան նվաճումներ անելու և լուսավորության դռները բանալու ձեր առաջ...» («Արև», Բաքու, 1914, 3 նոյեմբերի, N 173)։

8 Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1914, N 248, նոյեմբերի 7։

9 Տե՛ս նույն տեղում, N 252 նոյեմբերի 12։

10 ՀԱՄ, ֆ. 288, ց.1, գ.7, թ.31։

յանը (հետագայում՝ կաթողիկոս), Ներսիսյան դպրոցի տեսուչ Հովսեփ Խոնունցը, Երևանի ապագա քաղաքապետ Մմբատ Խաչատրյանը, Նիկողայոս քահանա Բավոյանը (Տեր Նիկոլը): Նրանք գնում էին սիրով, բայց հոգեպես ճնշված: Ըստ ամենայնի՝ խմբի անդամները ունեցել են նաև տարբեր հանձնարարություններ: Նրանց վերադարձի մասին «Մշակի» հաղորդման մեջ նշվում է, որ Հ. Խոնունցը գնացել էր քաղաքների ինքնավարության կողմից «աննդի կետեր հաստատելու», եպիսկոպոսները՝ ժողովրդին մխիթարելու ու հուսադրելու, կամավորներին խանդավառելու: Իսկ ողջ հայությանը հասցեագրված ասեկոսների ճշտումը և դրանց հակադարձումը հանձնարարված էր Թումանյանին՝ Ազգային բյուրոյի կողմից, Շիրվանզադեին՝ ռուսական թերթերի :

Յոթնյակի մեկնելու լուրը տպագրվեց ժամանակի մամուլի մի շարք օրգաններում¹¹: «Մշակն» այդ պահին, Համբաձում Առաքելյան-Թումանյան դատավարության ու բանավեճի տխուր պատմության հետ կապված, հերթական անգամ դրսևորեց իր կողմնակալ վերաբերմունքը և արձանագրեց միայն եպիսկոպոսների մեկնելու լուրը՝ շրջանցելով խմբում Թումանյանի, Շիրվանզադեի ու Հ. Խոնունցի ներկայությունը¹²: Գրեթե բոլոր հայ և ռուսալեզու լրագրերը, անդրադառնալով հոգևոր և աշխարհիկ գործիչների ուղևորությանը, ընդգծում էին միայն պատերազմի վայրերում տառապող ժողովրդին սրտապնդելու հանգամանքը և թաքցնում էին բուն պատճառը՝ ցարական զորագնդերի հրամանատարներին և հայ կամավորներին հանդիպելու, վերջիններիս անվան շուրջ տարածված բամբասանքների պատճառներին ծանոթանալու և, եթե թյուրիմացություններ կային, ապա դրանք հարթելու խնդիրը¹³:

1914 թ. նոյեմբերի 15-ին չորս հոգուց կազմված խումբը (Թումանյան, Մեսրոպ Տեր-Մոկիսյան, Շիրվանզադե, Հովսեփ Խոնունց) Թիֆլիսից գնացրով մեկնում է Էջմիածին, նոյեմբերի 16-ին հանդիպում է կաթողիկոսին ու հանձնարարականներ ստանում: Գևորգյան ձեմարանի ուսանողներից 27-ը կամավոր ռազմաճակատ մեկնելու ցանկություն են հայտնում: Այստեղ խմբին են միանում Ս. Խաչատրյանը, Խ. Սուրաբեկյանը և Ն.Բավոյանը (Տեր Նիկոլը): Արդեն 7 հոգով գիշերն Էջմիածնում անցկացնելուց հետո, վաղ առավոտյան կառքերով մեկնում են Իգդիր: Ծրագրված էր Կարսի վրայով անցնել Բայազետի շրջան - Ալաշկերտի հովիտ - Բասեն¹⁴

11 Տե՛ս «Հորիզոն», 1914, N 256, 16 (17) նոյեմբերի:

12 «Մշակի» թղթակցության մեջ ասվում էր, որ Վեհափառի հրամանով Երևանի և Թիֆլիսի հոգևոր առաջնորդները՝ Մեսրոպ և Խորեն եպիսկոպոսները, մեկնեցին ռուս-թուրքական պատերազմի թատերաբեմ «հայ գինավորներին այցելելու և մխիթարելու»: Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1914, N 258, 5 դեկտեմբերի:

13 «Հորիզոնը» ընդամենը արձանագրեց, որ խումբը մեկնել է պատերազմի դաշտ և ժողովրդի մեծ բազմություն նրանց «բարի երթ» է մաղթել: Բաքվի «Արև»-ի հաղորդմամբ՝ խումբն ուղևորվել է «Վեհափառ կաթողիկոսի կարգադրությամբ՝ հայ գինավորներին հոգեպես մխիթարելու համար»: Տե՛ս «Արև», 1914, N 187, նոյեմբերի 19(20): Իսկ «Տարազ» շաբաթաթերթն իր հաղորդմանը կցեց նաև «Արարատի» խմբագիր Բաբկեն վարդապետ Վարդազարյանի լուսանկարած Թումանյանի, Շիրվանզադեի և Նիկողայոս քահ. Բավոյանի խմբանկարը: «Գրական մեր աստղերը» վերտառությամբ հրապարակման մեջ հատուկ նշված էր. «Ս. Էջմիածնում, նոյեմբ. 17-ին անելով օրհնություն, Իգդիրի վրայով նույն օրն էլ ծանապարհվեցին ռուս-տաճկական պատերազմ» («Տարազ», Թիֆլիս, 1914, N 8, դեկտեմբեր, էջ 137: «Кавказское слово» լրագրի երկու հաղորդագրություններում նշվում էր, որ կաթողիկոսի հանձնարարությամբ «Էջմիածնի ու Կարսի ուղղությամբ ռազմաճակատ մեկնող եպիսկոպոսներին ուղեկցում են Հովհ. Թումանյանը, Շիրվանզադեն և Հ. Խոնունցը «Кавказское слово», 1914, N 53, 54:

14 Բասենի հարթավայրը գտնվում է Էրզրումի սարահարթից արևելք՝ մինչև Կաղզվանի շրջանը: Արևելյան մասում բավականին տարածված են ձահձուտները: Բասենի գավառակը 1909 թ. ուներ 169 գյուղ, որից 57-ը՝ հայաբնակ:

- Դելիբաբա¹⁵ - Խորասան¹⁶ - Զիվին¹⁷- Սարիղամիշ -Ալեքսանդրապոլ - Թիֆլիս ուղղությամբ¹⁸, սակայն ի վերջո ընտրվեց Մասիսի փեշերով Իգդիրից դեպի Բայազետ տանող կարճ ճանապարհը: Իգդիր մեկնելիս Էջմիածնի կայարանում հանդիպում են ռազմաճակատ մեկնող բժիշկներին¹⁹:

Թեև ճանապարհը կարճ էր (36 վերստ), սակայն **Իգդիր**²⁰ հասնում են միայն յոթ ժամ անց՝ նույն օրվա երեկոյան՝ հաղթահարելով մառախուղը, ճանապարհի տիղմն ու այլ խոչընդոտներ: Շիրվանզաղեն գրում է. «Մտանք Կովկասյան աշխարհահռչակ տիղմի մեջ... Գոհ էինք, որ մեր կառքերը չթաղվեցին թանձր տիղմի մեջ»²¹:

Իգդիրում երկու գիշեր անց են կացնում տեղացի վաճառական **Արշակ Հակոբյանի** ընդարձակ տանը: Այստեղ հայերի բոլոր բնակարանները զբաղեցրել էին ռուսական զորքերը: Հանդիպում են տեղի հայ մտավորականներին, ովքեր պատմում էին հատկապես գյուղերի դժվարին կացության ու հայերի տարած հաղթանակների մասին: Խմբի տրամադրության տակ է դրվում նախկին դերասան, այդ պահին պահեստի 29-ամյա սպա (պրապորշչիկ) **Արշավիր Շահխաթունին**²²: Նոյեմբերի 18-ի առավոտյան ժամը 10-ից հանձնախումբը երկու անգամ հանդիպում և գրուցում է գեներալ **Պ.Ի.Օգանովսկու**²³ հետ՝ զորաբանակի գլխավոր շտաբի գեներալ **Վ.Պ.Լյախովի**²⁴ ներկայությամբ, ով զրույցի ողջ ընթացքում լռություն էր պահպանում: Վերջինիս մասին Թումանյանը գրում է. «Լյախովը Թեհրանի հայտնի Լյախովն է: Խիստ հայաստաց և չի ծածկում»²⁵: Ողջ զրույցի ընթացքում թեև Լյախովը լուռ էր, բայց դեմքի արտահայտությունն անթաքույց քահարական էր: Շիրվանզաղեն գրում է. «Ինձ համար պարզ է, որ այդ մարդը մտքում արհամարհում է մեր կամավորական խմբերը»²⁶: Թումանյանը նկատել էր

15 **Դելիբաբա** հայաբնակ գյուղը գտնվում է Էրզրումի գավառի Խորասանի գավառակում, Արաքսի աջակողմյան փոքրիկ վտակներից մեկի ափին: Գյուղի մոտ պահպանվել է Մենուա թագավորի (810-786 թթ. մ.թ.ա) սեպագիր արձանագրությունը :

16 **Խորասանը** Էրզրումի նահանգի գյուղերից էր, որը գտնվում էր Արաքսի ձախ կողմում, Ստորին Բասենի գավառակում և նրա վարչական կենտրոնն էր: 1909 թ. ուներ 24 տ. հայ և 76 տ. թուրք բնակիչ: Ըստ 17-րդ դարի մի ձեռագիր հիշատակարանի՝ 1636 թ. այստեղ օրինակվել է Ավետարան:

17 **Զիվինը** Էրզրումի նահանգի Խորասանի շրջանի գյուղերից է: Այնտեղ հայտնաբերվել է Սևրաբուտի թագավոր Մենուայի (9-8-րդ դդ. մ.թ.ա.) սեպագիր արձանագրությունը:

18 ԹԹ, Թումանյանի անձնական գրադարան, Շիրվանզաղեի «Զիթենիի»՝ բանաստեղծի անձնական օրինակը, էջ 4:

19 Այդ մասին հիշատակություն կա Թումանյանի ռազմաճակատ կատարած առաջին այցելության օրագրում: Տե՛ս ԵԼԺ, հատ. 8, էջ 349:

20 **Իգդիրը** Երևանի նահանգի Սուրմալուի գավառի գյուղերից էր Երևանից 40 կմ. հարավ-արևմուտք՝ Արաքս գետի աջափնյա մասում:

21 Շիրվանզաղե, ԵԺ, հատ. 9, էջ 99:

22 **Արշավիր (Արշակ, Արշո) Շահխաթունին** (19.02.1885, Ալեքսանդրապոլ-04.04.1957, Փարիզ) մասնագիտությամբ **դերասան**, խաղացել է Թիֆլիսի Հայոց դրամատիկական ընկերության ներկայացումներում (1908-1909), ապա Բաքվի Մշակութային միության թատերախմբում: Առաջին աշխարհամարտի տարիներից ծառայել է ցարական բանակում, ապա ակտիվորեն մասնակցել է Մայիսյան հերոսամարտերի կազմակերպմանը՝ որպես **Արամ Մանուկյանի** մերձավոր գործընկեր, եղել է **Երևանի զինվորական պարտը**: Վտարանդվել է Կ.Պոլիս, այնուհետև անցել Բալկաններ, ապա հաստատվել Փարիզում: Նկարահանվել է ֆիլմերում, ճանաչվել որպես առաջնակարգ դերասան: Նկարահանել է «**Անդրանիկ**» ֆիլմը և հանդես եկել գլխավոր դերում: Նրա խաղացած կարևոր դերերից են նաև Սեյրանի դերը Շիրվանզաղեի «**Նամուսում**» և արեղայի դերը Շանթի «**Հին աստվածներում**»:

23 **Օգանովսկի (Օգանով) Պյոտր Իվանովիչ (1866 -)** - ռուսական բանակի բարձրաստիճան զինվորական, 1877-1878 թթ. ռուս-թուրքական և 1904-1905 թթ. ռուս-ձապոնական պատերազմների մասնակից, 1904 թ. գեներալ-մայոր, իսկ 1910-ից՝ գեներալ-լեյտենանտ:

24 Խոսքը վերաբերում է 1912-ից գեներալ-մայոր, այնուհետև գեներալ-լեյտենանտ **Վլադիմիր Պլատոնովիչ Լյախովին (1869-1920, Բաթում)**, ով Առաջին աշխարհամարտի տարիներին Կովկասյան Առաջին զորաբանակի գլխավոր շտաբի գեներալն էր, իսկ 1917-ից՝ Կովկասյան Առաջին կորպուսի հրամանատարը: Բաթումում սպանվել է անհայտ անձանց կողմից:

25 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 351:

26 **Շիրվանզաղե**, ԵԺ, հատ. 9, էջ 101:

ՀԱՎԵՆԵԿԱԾ

2014
ապրիլ-հունիս, 2014
Զ (ԺԲ) 466
Գրքի, թիվ 2 (46)

Վե՛ր համահայկական հանդես

նակ, որ 4-րդ բանակային կորպուսի հրամանատար **Պ.Ի. Օգանովսկու** զորամասի կապիտան **Վոլդեմար Հանսովիչ Օզոլը**²⁷ լավ է վերաբերվում հայերին, իսկ «Լյախովին իսկի չի սիրում»²⁸:

Հայերի կողմից գրույցը վարել է ռուսերենի փայլուն իմացությամբ և որոշակի դիվանագիտական կարողություններով օժտված Մեսրոպ եպիսկոպոսը: Գրողի վստահեցմամբ՝ «Մեսրոպ եպիսկոպոսը շատ տակտով տարավ խոսակցությունը»²⁹: Շիրվանզադեի բնորոշմամբ՝ 48-ամյա Օգանովսկին «մի բարեհամբույր, կայտառ և եռանդուն ծերունի էր»³⁰ և բավականին «սիրալիր» է ընդունել հայերին: Նա անմիջապես կարգադրել է Արշ. Շահխաթունուն իբրև թիկնապահ ուղեկցել խմբին մինչև Արծափ: Շահխաթունին, իմանալով հանձնախմբի նպատակը և կատարելով ռուսական հրամանատարության հրահանգները, փորձում էր հավատացնել, որ տաճկահայերը թալանում են գրավված գյուղերը և դեռ ռուսական զորքին էլ թանկ ապրանք վաճառում. «Հատը երկու ռուբլով ոչխար են առնում, 11 ռուբլով տալիս զորքին»³¹: Սակայն հենց սկզբից Թումանյանը լսում է նաև մեկ այլ կարծիք, ըստ որի՝ մի կողմից՝ ռուսները զգում են հայերի կարիքը, աշխատանք առաջարկում, մյուս կողմից՝ աշխատում են նրանց իրենց քաղաքական շահին ծառայեցնել: Սահակ անունով մեկի վստահեցմամբ՝ **«Նրանք ուզում են էդ ամենը իրենց ձեռքն առնեն...Ուզում են նաև մեր խմբերն իրենց ձեռքն առնեն: Նույնիսկ մեզ ռոճիկ են առաջարկում... Ինչ մարդիկ ծանոթացնում ենք՝ քաշում են իրենց, մեզնից հեռացնում** (ընդգծումը մերն է–Ս. Հ.)»³²:

Բնականաբար, հանձնախումբը Օգանովսկու հետ գրույցների ընթացքում փորձում է պարզել կամավորական ջոկատների մասին տարածվող լուրերի իսկությունը: Օգանովսկին քաջաբար կովելու գործում առաջնությունը տալիս էր ռուս զինվորներին՝ նշելով նրանց կարգապահությունը, փորձառությունը, զենքով ու զինամթերքով (թնդանոթներ, գնդացիներ) ապահովված լինելը, իսկ հայ կամավորների մասին խոսելիս չէր ժխտում տարածված ստահող լուրերը: Նրաներկայացմամբ՝ ռուսները 900 հրացան են դրել Իգդիրի խմբի տրամադրության տակ. «400 մուսինի, 500 բերդան»՝ ինքնապաշտպանության նպատակով բաժանելու համար, իսկ հայ կամավորներից ոմանք դրանք վաճառել են Սուրմալուի կողմերում հատը 10 ռուբլով: Այդ պատճառով նկատողություն է արվել Իգդիրում հայկական շտաբի ղեկավար Սահակին և քննություն են սկսել՝ հայտնաբերելու «բերդանների» տերերին: Իսկ Սահակի կարծիքով ինքը ղեկավարում էր ոչ թե շտաբ, այլ ռուսների հետ հարաբերություններ «պահելու պունկտ»³³: Օգանովսկին թերևս արտաքուստ միայն «սիրալիրությամբ», փորձում էր գնահատել ու բարձրաձայնել հայ կամավորական խմբերի նշանակությունը, նրանց՝ տեղանքին ու տեղացիների լեզվին ծանոթ լինելը և հենց դրանով ռուսական զորքին օգուտ տալը, բայց հատկապես Լյախովի ներկայությամբ արտահայտվում էր հնարավորինս զուսպ: Նա հայ կամավորների մասին ասում էր. «Նրանք ևս ունեն իրենց դերը... այդ դերն է գլխավորապես երկրի հետագոտությունը և թշնամու դիրքերի որոշումը...նրանք ճանաչում են թշնամի երկրի բոլոր անկյունները: Գիտեն լեզուն,

27 **Վոլդեմար Հանսովիչ Օզոլս (Վլադիմիր Անտոնովիչ Օզոլ)–05.10.1884, Վիտեբսկի նահ. Վիդեյա գ.–12.06.1949, Լատվիայի Ցեսիսի շրջ., Պիեբագա)** – ցարական բանակի կապիտան, ազգությամբ՝ լատվիացի: 1914–1915 թթ. զբաղվել է հայ կամավորական ջոկատների կազմավորման, մարտական և ֆիզիկական պատրաստվածության խնդիրներով, ղեկավարել նրանց ռազմավարությունը և հետախուզական գործունեությունը: Նրա շնորհիվ հայ կամավորների համար Քանաքեռում հիմնվել է զինվորական դպրոց: Ամեն ինչ արել է հատկապես Վանի հայությանը կոտորածից փրկելու համար:

28 **Թումանյան, ԵԼԺ**, հատ. 8, էջ 352:

29 Նույն տեղում, էջ 351:

30 **Շիրվանզադե**, ԵԺ, հատ. 9, էջ 100:

31 **Թումանյան, ԵԼԺ**, հատ. 8, էջ 350:

32 Նույն տեղում, էջ 350:

33 Նույն տեղում, էջ 352:

ծանոթ են տեղական պայմաններին»³⁴: Հայերի մասին այս գուսպ գնահատականներն անգամ, որոնք չէին մատնանշում կամավորների անձնուրաց մաքառումը, առաջացնում են Լյախովի դժգոհությունը, ով իր տարակուսանքն է հայտնում պաշտոնակցի գնահատականի առիթով:

Երկրորդ հանդիպումը գեներալի հետ տեղի է ունենում նույն օրը՝ Իգդիրում, երբ Օգանովսկին իր աղյուստատ Բեկթաբեկովի հետ փոխադարձաբար այցի է գալիս հանձնախմբին: Գեներալն այս անգամ փորձում է ավելի մտերմիկ երևալ. կամենալով շեշտել իր անաչառությունը, ընդգծում է իր հայկական ծագումը՝ ասելով. «Ես հայերին համակրում եմ անկեղծ... Գիտե՞ք՝ իմ արյան մեջ էլ մի քիչ «Կարապետ» կա»³⁵: Օգանովսկին ընդունում է հանձնախմբի մի քանի առաջարկները՝ համաձայնելով գյուղերում ավելի շատ մտավորականներից տանուտերեր նշանակել և հայ կամավորներից ձևավորել 1000 հոգուց կազմված նոր պահեստային խումբ: Նա վստահեցնում է, որ համակրում է հայերին և անկեղծ ցանկություն է հայտնում, որ «թրքահայ եղբայրների» խնդիրը վերջնականապես լուծվի:

Երեկոյան Թումանյանն այցելում է հայ կամավորների կացարանները, որտեղ հանդիպում է 100 զինվորների, ովքեր պիտի գնային միանալու պատերազմի առաջին գծում կռվող կամավորական խմբերին: Նրանց մեջ կային և փորձառու մարտիկներ, ովքեր կռվել էին ռուս-ձապոնական պատերազմում, և «անբեղ, անմորուս ուսանողներ», արհեստավորներ ու բանվորներ, ժամանակի հայտնի ռուս օպերային երգիչ Վոլգինը³⁶, ով հանձնախմբին բացատրում է, որ եկել է՝ հայ փոքրիկ տառապյալ ժողովրդի ազատության համար մարտնչելու: Նրանց մեջ էր ուսանողուհի, գթության թույր Սաթենիկ Պողոսյանը, ով դեռ չգիտեր, որ մեկ ամիս անց Մարիդամիշի մոտ թիվ 2 սանիտարական գնացքի հետ պիտի ընկներ թուրքերի ձեռքը և հրաշքով ազատվեր մի քանի օր կյանքի ու մահու կռիվ տալուց հետո:

Նոյեմբերի 19-ին հանձնախմբին ուրախացնում ու ոգևորում է Անդրանիկի հարյուրյակներից մեկի կողմից թուրք-պարսկական սահմանում Դոթուրը գրավելու, 100-ից ավելի թուրք ու քուրդ զինվոր վիրավորելու և 200-ին գերելու լուրը: Ճաշից հետո տեղում ինը ձիերով հանձնախումբն ուղևորվում է Օրգով: Թանձրացող տիղմի պատճառով ձիերի ընթացքը գնալով դանդաղում է: Հանդիպում են պատերազմական մթերքներ կրող ուղտերի քարավանների: Ուղտերի հարևանությունից խուսափելով՝ մի հայ կամավոր շեղում է խմբի ճանապարհը և կանգնեցնում ձա-հիճների առջև: Ձիերից վայր ընկներով՝ ձահձուտը ոտքով են հաղթահարում Թումանյանը, Շիրվանզադեն ու Խունուսը: Հանձնախմբի հետ միասին ձահձուտում է հայտնվում ուղտերի մի ամբողջ քարավան: Կարելի է միայն ենթադրել, թե ինչպես է սաստիկ ցուրտն ու խոնավությունը երեք ժամից ավելի տանջել հաճախակի դողեղոցքով հիվանդացող բանաստեղծին, մինչև դուրս են եկել ձահձուտից հարթ տարածություն և սկսել են ելնել Օրգովի բարձունքը:

Ուշ երեկոյան կանգ են առնում **Օրգովում**, որը ռուսական վերջին սահմանակետն էր: Այստեղ հանդիպում են **Արշ. Շահխաթունուն**՝ 10 ռուս զինվորների հետ, ովքեր զարմանում են, որ ձահիճը հաղթահարել են առանց կորստի³⁷: Շահխաթունին խմբի ուշադրությունը հրավիրում է մի հայի վրա, որին հենց այդ պահին ձերբակալում էին, քանի որ նա ինքնապաշտպանության համար ստացած զենքով Իգդիրից **Քայազետ** ձուկ էր տանում վաճառելու, և հրամանատարը զայրացած սպառնում է գեներալին զեկուցել, որ «հայերին զինաթափ անեն»³⁸: Իհարկե,

34 «Ձիթենի», էջ 10:

35 Նույն տեղում, էջ 10:

36 Վոլգինը երգչի ծածկանունն էր: Նա ծանաչված ռուս երգիչ Լեոնիդ Սոբինովի (1872-1934) եղբայրն էր: Իսկական անունը՝ **Սերգեյ Վիտալևիչ Սոբինով (Վոլգին)** - 29.05. 1876, Յարոսլավ, 1927, Մոսկվա:

37 Ռուս սպաներն ասում են ուղևորներին. «Եթե մի փոքր էլ առաջ շարժվեիք, պիտի հանդիպեիք ստորաձահձային ձեղքերի, ուր և, անուշտ, կգտնեիք ձեր հավիտենական օթևանը», Շիրվանզադե, Եժ, հատ. 9, էջ 109:

38 **Շիրվանզադե**, Եժ, հատ. 9, էջ 111:

Թումանյանի և նրա ընկերակիցների համար ռուս հրամանատարի զայրույթի պատճառը չէր կարող արդարացված լինել, քանի որ թիկունքում իր գործով զբաղվելիս ինքնապաշտպանության համար զենքը միշտ կրելը պատերազմական գործողությունների ընթացքում պետք է բնական համարվեր: Ավելին, ակնհայտ էր դառնում, որ հայերին չզինելու կամ զինաթափելու համար որոշ ռուս զեներալներ կօգտագործեն ցանկացած պատրվակ:

Այնուհետև հանձնախումբն անցնում է նաև **Չինգիլի (Կարկառ)** լեռնանցքը՝ ճանապարհի երկու կողմերում տեսնելով սատկած ձիեր ու եզներ, ուղտերի քարավաններ: Գնում են ձնաբուքի ուղեկցությամբ, ձյան վրա ուղտերի թողած հետքերով, տեսնում այն վայրը, ուր առաջին անգամ տեղի է ունեցել ռուսների ու թուրքերի ընդհարումը: Նոյեմբերի 19-ի կեսօրին (12 անց 30) հասնում են թուրքական մաքսատուն-կայան՝ **Ղարա** անունով, որը ռուսները վերանվանել էին **Կարե**: Նախկին մաքսատունը, որտեղից հեռանալուց առաջ թուրքերը հասցրել էին գանձարանը դատարկել ու ջրանցքը անօգտագործելի դարձնել («փչացնել»), այդ պահին ծառայում էր ժամանակավոր կայան՝ մարտադաշտից ուղտերով, առանց պատգարակների տեղափոխվող վիրավորների ու հիվանդների համար:

Թումանյանը այցելում է «**հիվանդանոց**» ծառայող խարխուլ, հողե հատակով ու բորբոսնած պատերով շինությունը: Գրողը նկատում է, որ «Շրջակա քրդերի գյուղերի շուրջը վարած հողեր չկան: Վար ու ցանքը թողած է հայ գյուղացիներին»³⁹: Նրա ուշադրությունից ոչինչ չի վրիպում՝ ոչ կաքավների երամները, ոչ քրդական խղճուկ, ավերակ դարձած գյուղերը, որոնցում միայն վառելափայտ էր մնացել, ոչ Ահմադ աղայի ապարանքի մնացորդները, ոչ ապականությունն ու կեղտը: Իսկ Շիրվանզադեի տպավորությամբ՝ «Մեղք է այդ որջանոցին մարդկային բնակավայրի անուն տալ: Միխրագույն քարակույտերի խառնիխուռն հավաքածու է դա, որ հեռվից գերեզմանատան տպավորություն է գործում»⁴⁰: Թումանյանը խմբի մյուս անդամների հետ իջնում է ձիուց և մտնում մի ցածր ու կիսախարխուլ շինություն, ուր նրանց զարմացած դիմավորում են ռուս սպաները և ազգությամբ հրեա մի բժիշկ: Դեպի Արծափ ճանապարհն անցնում էր քրդական մի գյուղի կողքով, որի մոտ տեղի էր ունեցել ռուսների երկրորդ ճակատամարտը համիդեականներից ու 1500 ասկյարներից կազմված թուրքական զորքի հետ: Թուրքերը պարտվելով մի քանի ժամվա ընթացքում նահանջել էին այդ վայրից Դիադիսի կողմերը, իսկ քրդերը Արծափը կողոպտելուց հետո պատսպարվել էին լեռներում: Օրգովից Արծափ վեց ու կես ժամում 32 վերստ ճանապարհը հաղթահարելով, ձահճուտների մեջ ընկնելով, նոյեմբերի 20-ին՝ օրվա երկրորդ կեսին, հասնում են **Արծափ**⁴¹, որտեղ գրողի համար տպավորվում է բարձրավանդակի վրա կառուցված հին եկեղեցին՝ իր մեծ կորած Գմբեթով, և գյուղի ծուխը:

Արծափն արևմտահայ առաջին գյուղն էր, ուր ոտք դրեց բանաստեղծը: Տեսավ բերդավանը՝ շրջապատված կիսավեր պարիսպներով, Ս.Գրիգորի ավերակ վանքը և Ծաղկավանքը, որը շեն ու կանգուն է եղել մինչև 19-րդ դարի վերջը: Կանայք ու երեխաները տներից դուրս են գալիս՝ դիմավորելու անծանոթ հյուրերին: Գյուղը դարձրեց չուներ. ամենուր խեղճություն էր: Յուրաքանչյուր տուն 30-90 օրավար հող ուներ: Ռուսական զորքի առաջխաղացման լուրն առնելով՝ արծափցիները սկզբում ուրախացել էին, քանի որ նրանց գյուղում թվով 1500 թուրքական զորք էր կանգնած: Հանկարծակիի գալով՝ համիդիեն հասցրել էր փախուստից առաջ կողոպտել հայկական եկեղեցին, մի քանի հայ տներ, տարել էր 80 գլուխ տավար ու «եղած-չեղածը», ինչ-որ ճանապարհին պատահել էր: Թուրքերը

39 Թումանյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 355:

40 Շիրվանզադե, ԵԺ, հատ. 9, էջ 115:

41 **Արծափ** – գյուղ Էրզրումի նահանգի Բայազետի գավառում գտնվող Արծափաքար լեռան ստորոտին, Արծափ գետակի ափին, Չինգիլի լեռնանցքի մոտ, Իգդիրից՝ Հին Բայազետ տանող ճանապարհի աջ կողմում: 1914 թ. բաղկացած էր 120 տնից: 1914 թ. Արծափից գաղթեց 100 հայ ընտանիք:

բռնի ուժով Արծափից տարել էին 90 հայ զինվոր, որոնցից 82-ին հաջողվել էր փախչել: Ռուսները գրեթե բոլոր արծափցիներին զենք էին տվել, սակայն բնակիչները դժգոհ էին: Պատճառները միանգամայն հասկանալի էին և արդարացված: Ռուս զինվորներն ապրում էին հայերի տներում, որոնց «սենյակները փոքր, խեղդված ու աղքատ»⁴² էին, անվճար օգտագործում էին բնակիչների ձմեռվա ողջ վառելափայտը, իսկ փայտեղեն (հիմնականում բարդի) գյուղը չունեի, Իգդիրից էր բերում: Արագորեն սպառվում էր գյուղի ողջ վառելիքը, այդ թվում և այթարը, ինչպես նաև տավարի կերը՝ խոտը: Եվ եթե դրսից օգնություն չհասներ, «ժողովուրդն էլ ցրտից շատ կնեղվի, տավարն էլ կկոտորվի»⁴³:

Սակայն բնակիչները դժգոհում էին ոչ այնքան օրեցօր ավելացող թշվառությունից, որի ահագնացումն այդ օրերին նրանց համար սովորական էր դարձել, որքան իրենց կանանց անհանգստացնելուց. «Ամեն տան զինվորներ են ապրում, ընտանիքի հետ միասին, – գրում է բանաստեղծը: – Գանգատվում են, որ կանանց ձեռք են տալիս: Նավթ էլ չկա, մութն է լինում»⁴⁴: Սակայն բանաստեղծի աչքին կանայք համարձակ էին երևում: Բանաստեղծի հետ իր զրույցի ընթացքում ռուս զինվորների՝ հայ կանանց նկատմամբ սեռական ոտնձգությունների մասին է վկայել Ղորղանան անունով մի հայ, որին Օրման անունն էին տվել ի պատիվ Մաղաքիա Օրմանյանի: Օրմանը «Պատում է, որ ճշմարիտ է, զինվորները, երբ մրսած գիշերով գալիս են, ներս են մտնում – լինում է ծոցները, բայց մասնավոր դեպքեր են»⁴⁵: Սա խոստովանում էր մի հայ, որը վայելում էր ռուսների վստահությունն ու հարգանքը⁴⁶:

Ուղևորության ընթացքում ամենաճշողը ականատեսների պատմածներն էին հայ կանանց բռնաբարությունների մասին: Թումանյանի օրագրում կարդում ենք. «Կանանց բռնաբարություններ անխտիր՝ քրդի, թուրքի ու հայի, կատարվել է սոսկալի չափով–նահանջելիս համիդիականները, այնուհետև կազակները, մինչև այժմ, ապա անխտիր բոլոր թալանչիները: Խաչատուրն ասում է՝ աչքովս տեսա նշանավոր մարդկանց կանայք Մոսուում ուղղակի ընկած էին ու չէին կարողանում վեր կենալ, էնքան բռնաբարել էին իրար ետևից, ամենաքիչը մի 40 հոգի. Դիաղինում գիշերը կանանց ձիչեր էին լսվում: Իսկ հայերի տներում միասին քնում են զինվորներն ու կոզակները տանցոց հետ: Եվ լիքն են բոլոր գյուղերը»⁴⁷: Գրողի գրառումներում կարդում ենք. «**Ջիրո**»⁴⁸ գյուղի մոտ Քյուֆղրան գյուղում 6 տուն հայ են (միայն երեխաներ[ի]ն են փախցրել), մնացած ամենքին բռնաբարել են կոզակները»⁴⁹:

Երբ հանձնախմբի անդամներին ուղեկցում են կիսախավար, բայց ընդարձակ գոմ հիշեցնող մի բնակարան, նկատում են այնտեղ ապրող ռուս զինվորների՝ «առանց վերնագեեստի, գրեթե կիսամերկ»⁵⁰: Արծափում հատկացված օթևանը մի մեծ սենյակ էր՝ հողե հատակով, կավե պատերով, ձվաձև փայտյա առաստաղով, երկայթե վառարանով: Ճանապարհի ցրտից ու ձնաբքից հոգնած խմբին այդ սենյակը «արքունական ընդունելության» սրահ է թվում, մասնավոր, երբ գի-

42 Թումանյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 355:

Նույն տեղում:

43 Նույն տեղում:

44 Նույն տեղում:

45 Նույն տեղում, էջ 356:

46 Օրմանը փախել էր թուրքերի դեմ ըմբոստացած իր հորը սպանողի՝ համիդիեի քուրդ հազարապետ Ահմադ բեկի զորագնդից, Իգդիրում միացել էր ռուսական զորքին և վերադարձել Արծափ: Ռուսները խնդրում էին միջնորդել Օրմանին տանուտեղ նշանակելու համար:

47 Թումանյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 377:

48 Ջիրոն էրգրումի նահանգի Բայազետի գավառի Կարաքիլիսայի գավառակի գյուղերից էր՝ Կարաքիլիսա-Դիաղին ճանապարհի ձախ կողմում: Այդ պահին ուներ 501 տուն հայ բնակիչ, որոնք տեղահան եղան 1915–1916 թթ., մասամբ էլ կոտորվեցին: Գյուղը մոտ էր Նպատ լեռանը: Մերձակալքում կար Մելի անունով մի հին ավերված բերդ:

49 Թումանյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 387:

50 Շիրվանզադե, Եժ, հատ. 9, էջ 117:

նու փոքրիկ բաժակներով թեյ են մատուցում: Այստեղից նոյեմբերի 20-ին՝ առաջին անգամ ուղևորության ընթացքում Թումանյանը նամակ է գրում ընտանիքին. «Սիրելիք, հենց նոր ենք եկել Արծափ: Մի օդում, բոլորս մի թախտի վրա, աջ ու ձախ թիկնը տված՝ թեյ ենք խմում: Երեկ դուրս եկանք Իգդիրից, ընկանք մեծ ճահիճների մեջ (Մասիսի թաքթաքուտները), իսկ էսօր կեսօրին Չինգիլի նշանավոր լեռնանցքը անցանք և մեր առջև բացվեց Հին Բայազետի հովիտն՝⁵¹ ու քաղաքը և Մասիսը Տաճկաստանի կողմից»⁵²: Ներս է գալիս գյուղի տարեց քահանան և պատմում նախ՝ թուրքերի, ապա՝ քրդերի կատարած թալանի մասին: Երիտասարդ անզեն հայերը քաշվել էին լեռները. բարեբախտաբար քրդերը կանանց ու երեխաներին չէին կոտորել: Այնուհետև եկել են ռուսները: Հայերը բացել են իրենց շտեմարանները և ոչինչ չեն խնայել նրանց համար, թեև այդ պահին չունեին ոչ ցորեն, ոչ գարի ու դարման, ոչ էլ, մանավանդ, վառելիք:

Ռուսների թալանը և՛ ուղղակի էր, և՛ շորթման տեսքով: Նրանք բռնագրավում էին մթերքը և այդ օրերին ընդունված գնի չնչին մասն էին տալիս: Թումանյանը գրում է Ղարաքիլիսայում և Թաղլիչայում (Թաղլիջան) տեղակայված Վոլգյան, Տվերյան կազակների զորքերի գնդի Առաջին հարյուրյակի հրամանատար գնդապետ **Տուսկանի** և նրա օգնական **Յուզուլունի** հետևյալ հրամանի մասին. «Գարու գինը՝ 70, խտոր՝ 30) սա հրամանագրում է գարին՝ реквизиция-ի (բռնագրավման) կարգով 30 և խտոր 15-ով վերցնել: Եվ էսպես կողոպտում են: Սա արդեն գործ է դառել»⁵³: Երբեմն էլ ռուս զինվորները թալանում էին և պատժից խուսափելու համար մեղքը բարդում էին հայերի վրա: Այսպես, ռուս սպա Սվիրինը Թումանյանին պատմում էր. «Կազակները 40 ոչխար էին խել ու հանձնել մի հայի, թե տար՝ գյուղումը մեզ կհանձնես, իբրև մերը: Բանը բացվում է, մոտ 100 զինվոր վրդովվում են օֆիցերի դեմ: Այսուամենայնիվ, 8 մեղադրյալ բռնում են դրկում Ղարաքիլիսա՝ դաշտային դատարանի»⁵⁴: Կարելի է միայն ենթադրել, թե ինչպիսի խիստ պատժի են արժանացել անմեղ հայերը Ղարաքիլիսայի դաշտային դատարանում, որտեղ տեր ու տնօրենը նշանավոր հայատյաց Աբացինն էր:

Արծափում քրդերին զինաթափ էին արել տեղի բնակիչները. «Տաճկահայերն էլ իրենց քաջությունը ցույց են տվել գլխավորապես քրդերին զինաթափ անելիս, ինչպես և Արծափ»⁵⁵: Սակայն շուտով Թումանյանը տեղեկանում է, որ «Հրաման եկավ զինաթափ անել հայ թե քուրդ՝ ամենքին»⁵⁶:

Նոյեմբերի 20-ի առավոտյան գնում են Արծափի եկեղեցի, ուր հավաքված էր տեղի հայ բնակչությունը: Արծափում բոլոր տները պատերի միջոցով գաղտնի հաղորդակցություն ունեին միմյանց հետ, վտանգի ժամանակ միմյանց գզուշացնելու նպատակով. «Կարելի է գյուղի մի ծայրից մտնել առաջին պատահած տունը և դուրս գալ մյուս ծայրում, առանց փողոցները տեսնելու»⁵⁷: Քրդերը եկեղեցին թալանել էին ամբողջությամբ, տարել էին խաչերն ու խաչվառները, սեղանի արդուզարդը, գրքերն ու գրակալները, նույնիսկ պատերի միջից տարել էին այն ամենը, ինչ փայտից էր, ու այրել էին: «Հին եկեղեցի է,- գրում էր Թումանյանը: -Ժողովուրդը եկել էր: Խեղճ, կուչ եկած: Գաղթական քահանան: Մեսրոպ և Խորեն եպիսկոպոսները մաղթանք կատարեցին: Եկեղեցու բակը մտնելով առաջինը աչքներիս ընկավ գերեզմանը, յոթը գնդակով սպանած Օրմանի հոր գերեզմանը: Խոսեց Մեսրոպ եպիսկոպոսը: Ասավ, որ էս նեղությունները ժամանակավոր են, կանցնեն և այլն: Ժողովրդից խոսեցին, թե՛ վառելիքի, թե՛ տավարի, ուտելիքի

51 **Բայազետի հովիտը** կամ դաշտը գտնվում է Մասիսից հարավ-արևմուտք: Հնում կոչվել է Գոգ հովիտ (Կոգովիտ):

52 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 10, էջ 218:

53 Նույն տեղում, հատ. 8, էջ 367:

54 Նույն տեղում, էջ 385:

55 Նույն տեղում, էջ 358:

56 Նույն տեղում, էջ 357:

57 **Շիրվանզադե**, ԵԺ, հատ. 9, էջ 121:

համար:...Եվ առաջին անգամ կայսերական մադթանք կատարվեց Արծափի հին հայոց եկեղեցում ու կարդացվեցին համապատասխան աղոթքները»⁵⁸:

Առավոտյան ստանում են Երևանի քաղաքագլուխ Սմբատ Տեր-Խաչատրյանի հեռագիրը: Հնարավոր է, որ այն նոյեմբերի 26-ին՝ ցարի Թիֆլիս ժամանելու հետ կապված՝ խմբի գործողությունների արագացման և Մեսրոպ Եպիսկոպոսի՝ մինչև նոյեմբերի 24-ը Թիֆլիս վերադառնալու մասին էր: Խմբին հրաժեշտ է տալիս Շահ-խաթունին. ուղեկցող այլ սպա և զինվորներ են տրամադրվում: Արծափից խումբն ուղևորվում է Վիթխարի ժայռերով շրջապատված անմատչելի թվացող Բայազետ⁵⁹: Ճանապարհին չորսրոյր տեսնում էին ցրտից, սովից ու հոգնածությունից սատկած ձիերի, ուղտերի ու էշերի լեշերի վրա խմբված գիշակեր ագռավների ու «գիլագռավների, զանազան տեսակի կոտրած կառքերի մասեր»⁶⁰: Ռազմի դաշտն այնքան մոտ էր, որ Բայազետ մտնելիս Մոսունի կողմից լսվում էր թնդանոթաձգություն: Երկու բերդերից մեկը քաղաքի ծայրում էր, մյուսը քաղաքից դուրս՝ ժայռերի մեջ: Մինչդեռ անտոխկ Բայազետից թուրքերը ռազմական նկատառումներով փախել էին առանց մի կրակոց արձակելու: Ըստ Թումանյանի հավաստիացումների՝ թուրքերն ու քրդերը իրենց ունեցածի մի մասը փախցրել էին ու իրենք էլ փախել, որ ետ գան ու հայերի հետ հաշվեհարդար տեսնեն, բայց հենց առաջին օրը բարձրացած սուկալի բուրբի ու փոթորկի պատճառով չէին կարողացել վերադառնալ, և երեք օր քաղաքը մնացել էր հայերի ձեռքին: Որոշ թուրքեր իրենց հրացանները պահ էին տվել հայերին, ոմանք էլ թաքնվել էին հայերի տանը:

Քաղաքի մոտ հանձնախմբին դիմավորում են մի քանի ձիավորներ, որոնց պարագլուխը քահանա էր: Դիմավորելու եկած տեղի ողջ բնակչությունը աղ ու հացով ու երկյուղածությամբ է ընդունում եկվորներին: Անմիջապես բազմամարդ թափորով ուղևորվում են քաղաքի կիսավեր ու թալանված եկեղեցի, ուր հնչում են Մեսրոպ Եպիսկոպոսի մխիթարանքի խոսքերը: Թումանյանը վկայում է նաև Բայազետի շրջանում թուրքերի ունեցած ահաբեկչական ծրագրերի մասին: Երբ թուրքական զորքը պարտադրված է եղել նահանջել, նրանց հետ հեռացել է նաև թուրք բնակչությունը: Սակայն մինչ այդ կողոպտել են հայերին, նախատեսել էին քաղաքի ողջ 3700 հոգի բնակչությանը սրի քաշել, բայց հասցրել են միայն 4 հոգու սպանել. որոշել էին ձերբակալել ու «խեղդել» քաղաքի 51 հայտնի անձնավորությունների. «Տեռորի մեծ ծրագիր են ունեցել,– գրում է Թումանյանը,– 51 հոգի Բայազետ, ապա թե նահանջելիս ջնջել Արծափ և Մոսուն»⁶¹: Սակայն իրենց հերթական դժոխսային ծրագիրն իրականացնել չէին կարողացել երկու պատճառով: Նախ՝ հայերին այդ մասին տեղյակ էր պահել Մամեդ-բեգ անունով մի քուրդ, հայերի բնորոշմամբ՝ «հազվագյուտ» ցեղապետ, և ապա քաղաք էր հասել ռուսական զորքի՝ Բայազետի մատույցներին հասնելու լուրը:

Բայազետում մեկը մյուսից սահմոկեցուցիչ լուրեր էին հասնում Արևմտյան Հայաստանի տարբեր մասերից, հատկապես հայաբնակ Խաչանի⁶² գյուղում 600 տնից բաղկացած ամբողջ բնակչության կոտորածի մասին:

Թումանյանին այցելում է նաև «Սշակի» թղթակից, Բայազետի ոստիկանապետ Աբգար Տեր-Աբրահամյանը: Ոստիկանապետը կովկասահայերի խնդրանքով միջնորդում է, որ նույն օրը՝ նոյեմբերի 21-ի երեկոյան, նրանց ընդունի ծնուն՝

58 Թումանյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 356:

59 Բայազետ-բերդաքաղաք Էրզրումի նահանգում: Բայազետում էին նստում մուխասարիֆը, հայերի առաջնորդական փոխանորդը և Ռուսաստանի հյուպատոսը: 1914 թ. քաղաքն ուներ 5000 բնակիչ, որից 2000-ը հայ էին, մնացածը՝ քուրդ ու թուրք: Քաղաքում կար երեք մզկիթ, երկու հայկական եկեղեցի՝ Կարապետ և Ս. Վարդան (Ապտիկոր թաղում), ինչպես նաև Ամենափրկիչ հնագույն հայկական եկեղեցու ավերակները, մի շարք ուխտատեղիներ: Հայերը ամբողջովին տեղահան արվեցին 1918 թ., երբ թուրքերը ետ վերցրին Բայազետը:

60 Թումանյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 360:

61 Թումանյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 357:

62 Խաչանի-Էրզրումի նահանգի Բայազետի գավառի գյուղ-ավան:

ղով երևանցի, միշտ հայերի մեջ ծառայած գեներալ-նահանգապետ **Դրյագինը**⁶³ (Բայադին): Զրույցը տեղի է ունենում նախ՝ նահանգապետի առանձնասենյակում, ապա սեղանատանը՝ ընթրիքի սեղանի շուրջ: Ներկա էր նաև նախկին հյուպատոս **Ա.-ն (Ակիմովիչ)**՝ այդ պահին գեներալի քաղաքացիական գծով քարտուղարը: Նա բացատրում է, որ հաճախ են թյուրիմացություններ ծագում արևմտահայերի՝ ռուսերեն չիմանալու պատճառով և առաջարկում է ռուսահայ թարգմանիչ տրամադրել: Թումանյանը ցավով նկատում է, որ բացի քուրդ ազդեցիկ մարդկանցից, օրինակ՝ Բաքոյից, նաև վրացի ծառայողներն են ռուսներին տրամադրում հայերի դեմ. «Հայերի դեմ են զինված ավելի վրացի ծառայողները և առհասարակ ծանր մեղադրանքներով շատ գրություններ են գնացել վերին իշխանությանը»⁶⁴: Առանց լուրջ պատճառի կարող էին բանտ նետվել նրանք, ովքեր հայերին օգնության ձեռք էին մեկնում: Թումանյանը պատմում է. «Մի ջաղացպան, որ կարգին մարդ է, օգնել է հայերին, մեղադրվում է, իբր թե կամեցել է մի օֆիցեր սպանել և զցել քրդերի վրա-բանտարկված է»⁶⁵:

Դրյագինը ակնարկում է, որ հայերը նեղում են քրդերին: Երբ նրան հակադարձում են, թե հավածվողը հայն է, պատասխանում է «Մինչև այժմ այո՛, բայց այժմ հայերն են սկսել նեղել քրդերին»⁶⁶: Նահանգապետը թեև ժպտալով, բայց սպառնալիք է հնչեցնում. «Այսուհետև այս երկրում գործելու է օրենքը և ոչ բռնությունը»⁶⁷: Կարելի է պատկերացնել, թե որքան մեծ պետք է լիներ բանաստեղծի տարակուսանքն ու հիասթափությունը հայերին պատժելու բացահայտ ակնարկից: Եվ որքան էլ գեներալը խոստանար, թե «Համենայն դեպս կարող եք հավատալ, որ ես Ձեր տառապյալ հայրենակիցներին անպաշտպան չեմ թողնիլ»⁶⁸, և որքան էլ ժպտար, դրանից գրողի տրամադրությունը չէր փոխվելու, իսկ մտահոգությունը՝ պակասելու: Նույն օրերին թե քրդերին և թե հայերին զինաթափ անելու հրաման էր ստացվել: Սակայն Դրյագինը հանգստացնում էր հանձնախմբին՝ վստահեցնելով, որ հրամանը միայն քրդերին է վերաբերում, ովքեր գարնանը ամենքի համար սպառնալիք են դառնում:

Մերոպ եպիսկոպոսն էլ իր հերթին բարձրացնում է ռուսներին անհանգստացնող ինքնավարության խնդիրը՝ ասելով, որ այդ մասին ռուսական իշխանություններն են խոսել և խոստացել, իսկ հայերը նման պահանջ չեն դրել: Հանձնախումբը փորձում է հասկանալ նաև ռուսների կողմից հայերի տները խուզարկելու և նրանցից զենքերը խլելու պատճառները: Բացատրությունը առավել քան անհեթեթ էր. նահանգապետն ասում էր, թե իբր՝ թուրքերն ու քրդերը գնալիս իրենց զենքերն են պահ տվել հայերին, որ վերադարձին նորից ետ ստանան, դրա համար էլ հայերից բռնագրավում են իբր՝ թշնամու զենքերը: Բնականաբար հանձնախումբը չէր կարող հավատալ Դրյագինի խոսքերին, քանի որ, ինչպես արձանագրում է բանաստեղծը, այնուամենայնիվ, հայերին զինաթափ էին անում ռուսները: Նա վկայում է. «Բայագետի շրջանում հայերից զենք չեն առնում, իսկ Ղարաքիլիսայում հավաքում են»⁶⁹ :

Նոյեմբերի 22-ի առավոտյան Թումանյանը հանդիպում է քրդերի «**հայդար-**

63 Խոսքը վերաբերում է 1911-ից ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ, գեներալ նահանգապետ **Միխայիլ Նիկոլայիչ Դրյագինին**– 01.11.1852 ” (Թումանյանը գրում է Դրյագին): Կրթությունը ստացել էր Բաքվի ռեալական գիմնազիայում, ուղղափառ էր, բանակում ծառայել է 1872 թ. դեկտեմբերի 28-ից, մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին: 1911 թ. զորացրվել է, սակայն Առաջին աշխարհամարտի սկզբին վերստին զորակոչվել է բանակ: Պատերազմի սկզբում եղել է Կովկասյան ռազմաճակատի օկրուգի շտաբին կից պահեստային զորամասում:

64 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 357:

65 Նույն տեղում:

66 **Շիրվանզադե**, ԵԺ, հատ. 9, էջ 129:

67 Նույն տեղում, էջ 130:

68 «Ձիթենի», էջ 37:

69 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 365:

ցի» ցեղերի մաս կազմող «Շամսկցի» ցեղից⁷⁰ գնդապետ Մամմադ բեկ Ամարադա օղլուն: Նա 800 քուրդ ձիավորներով ու իր ցեղով հանձնվում է ռուսական իշխանություններին: Մամմադ բեկի տունը, որը **Դիադինի**⁷¹ մերձակայքի Միրզա-ջան գյուղում էր, խուզարկում են. այն հավանաբար կապված էր տարածված լուրերի հետ, թե նա և իր կինը շարունակ դաշնակցականների համար զենք են տեղափոխել⁷²:

Նույն օրը եկեղեցական մաղթանք է կատարվում Բայազետի եկեղեցում՝ ռուսական զորքի ու զինվորական իշխանության, գեներալ նահանգապետ Դրյագինի ու նրա օգնականի ներկայությամբ:

Մերոպ եպիսկոպոսի փոխարեն եկեղեցում խմբված բազմության առջև, որոնց մեջ քիչ չէին նաև ցնցոտիավոր կանայք՝ գլխարկի փոխարեն շալեր կապած, ելույթ են ունենում Խորեն եպիսկոպոսը, Սմբատ Խաչատրյանը և Թումանյանը: Եկեղեցու արնաշաղախ պատերի մեջ նա փորձում էր հույս ներշնչել հոգեսպառ ու արյունաքամ ժողովրդին: Նրանց ելույթները, ինչպես նաև տեր Նիկոլի երգը, արցունքներ են կորզում, թվում է թե, արդեն ցամաքած աչքերից: Եկեղեցուց դուրս գալուց հետո տեղացի երիտասարդները Թումանյանին և նրա ընկերակիցներին ուղեկցում են քաղաքի արևելյան ծայրամասում գտնվող Բայազետի՝ գորանոցի վերածված բերդերից մեկը: Տպավորում են թե՛ պալատը, թե՛ բերդի մաս կազմող բանտը՝ խոնավ, ծխից սևացած պատերով: Մակայն քաղաքից դուրս՝ ժայռերի մեջ գտնվող ամրոցն այցելելու ժամանակ չեն ունենում: Թումանյանը հանդիպում է մի քանի թուրքերի, որոնք ոչ միայն չէին փախել, այլև գալիս էին հայերի նկատմամբ իրենց բարեկամական վերաբերմունքն արտահայտելու: Տանտերը գրողին հարգանքով ներկայացնում է հայտնի կալվածատեր և դատարանի անդամ **Իսմայիլ Էֆենդի Նալբանդ Զադեին**, ով հայերի ինքնապաշտպանական կոմիտեի անդամ էր և շատերի կյանքն էր փրկել կործանումից:

Հայ կամավորների մեջ առանձնանում էին երկու խմբեր: Առաջինը Կովկասում ձևավորված կամավորական կազմակերպված ջոկատներն էին, որոնք մարտնչում էին ռուսական զորքերի հետ միասին՝ հրացանների մոսինի կոչվող տեսակով, իսկ երկրորդը տեղացիներից ստեղծված ինքնապաշտպանական խմբերն էին, որոնք կռվում էին բերդաններով: Հենց վերջիններն էին իրականացնում իրենց հարազատներից թալանված գողոնը վերադարձնելու գործը, գուցեև թշնամու թողածն իբրև ավար էին առնում՝ վրեժից և արդարությունը վերականգնելու մղումից:

Թումանյանը վկայում է, որ երբ հայերը հնարավորության դեպքում իրենց ապրանքը ետ են վերադարձրել թե՛ ռուսները, և թե՛ անգամ վրացի ծառայողները գրավոր բողոք են ներկայացրել իշխանություններին հայերի «թալանի» մասին: Բանաստեղծը գրում է. «Բողոքը հայերին թալանել են նախքան ռուսների գալը: Անցել է մի ամիս, այժմ, երբ հայը գնում է իր ապրանքը վերադարձնում, գալիս են գանգատվում, թե հայերը մեզ թալանեցին: Իսկ հայերը սրան առանձին նշանակություն չեն տալիս, մինչդեռ սրանով տրամադրություն է ստեղծվում»⁷³:

Անկախ նրանից՝ հավատում էր, թե չէր հավատում Թումանյանը ռուսների միտումնավորությանը, այնուամենայնիվ, խորհում էր, որ այդ մասին պետք է բարձրաձայնել ու տեղյակ պահել թե՛ Ազգային բյուրոյին, թե՛ ռուսական իշխանություն-

70 Բայազետ զավառակում թուրքերի նախաձեռնությամբ 16-17-րդ դդ. բնակեցվել են քրդական Միլվանի անունով ցեղերը՝ հայերին հնազանդ պահելու համար: 1909 թ. տվյալներով՝ զավառակի 110 գյուղերից միայն 3-ն էին հայաբակ՝ Արծափը, Քորունը և Միտունը: Մեծ մասը կազմում էին քրդական ցեղերը, որոնք կոչվում էին ջալալի, սիլվանցի, որի մեջ մտնում էին սիթկցի, սիբըլցի, մանրքցի, հազարցի, բաղըլցի, բեյսան ցեղախմբերը: Թումանյանի օրագրի գրառումները հավաստում են, որ այնտեղ եղել են նաև «հայդարցի» և «շամսկցի» անունով քրդական ցեղեր:

71 **Դիադինը** Էրզրումի նահանգի Բայազետի զավառի գյուղաքաղաք էր, համանուն զավառակի կենտրոնը: Գտնվում է Արածանի վերին հոսանքի աջ ափին, Ծաղկանց (Ալաղաղ) լեռների արևելյան փեշերին, մի քանի ծանապարհների հատման կետում:

72 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 362:

73 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 357:

ներին: ««Ավտոնոմիան» սաստիկ գրգռում է կառավարական պաշտոնյաներին, վկայում է պոետը,– և հաճախ հեգնությամբ հարցնում են՝ Հը՛, շուտով ձեր թագավորը կլինի, հա՛... Զինվորական գլխավորը վկայում է, որ հայերը, զինվորները կռվում են առյուծի նման և շատ քաջ են, իսկ քրդերը ոչխարի հոտ են»⁷⁴: Ինչ վերաբերում է թալանին, ապա պատերազմական այնպիսի պայմաններում, երբ մերթ մի կողմն է նահանջում, մերթ՝ մյուս, թալանն ու շորթումը սովորական էին: **Թալանում էին ոչ միայն թուրքերն ու քրդերը, այլև հենց ռուսները, ընդ որում, միանգամայն բացահայտ:**

Թումանյանի գրառումներում հանդիպում ենք հետևյալ փաստերին. ռուսները Մեյրմաննա գյուղի տանուտեր Թաթոս Սաֆոյանի տանից մի քանի 100 ռուբլու ապրանք են տանում, տալիս են միայն 18 ռ., Բայազետում Հովհաննես Քրմոյանից 300 ռ. գարի են տանում, տալիս են միայն 60 ռ. և դեռ տանտիրոջն էլ ծեծում. 12000 փութ խոտը տանում են գյուղացիներից միանգամայն անվճար: Ճշմարտությունն այնքան ակնհայտ էր, որ նույնիսկ ռուս իշխանավորներն էին խոստովանում ռուս զինվորների մեղմ սասած «անկարգությունները»՝ թե՛ հայ գյուղացիների հաշվին ապրելն ու թե՛ նրանց կանանց անհանգստացնելը, սակայն վստահեցնում էին, որ իրենք անգոր են զինվորներին կարգի հրավիրելու:

Բայազետից Դիաղին ճանապարհվելիս ռուսները նորոգում են հանձնախմբի անդամների ձիերի պայտերը: Գեներալ–նահանգապետ Դրյազինը, նկատի ունենալով հնարավոր վտանգները, խմբին ուղեկցող զինվորների թիվը հասցնում է 25–ի: Դժվարին ճանապարհներին, որքան էլ ռուս թիկնապահներ են ունեցել, Թումանյանը իր ծանր մաուզերից անբաժան է եղել: Խորեն եպիսկոպոսն ու Սմբատ Խաչատրյանը նույնպես զինված էին: Բացի Շիրվանզադեից փաստորեն խումբը զինված էր և ամենածանր ու «ամենաստակալի» զենքը Թումանյանի ձեռքում էր:

Դիաղինի մոտերքում դարձյալ հանդիպում են սատկած ձիեր, ուղտեր, եզներ, ագռավներ, կոտրած կառքերի տարբեր մասեր, հոկտեմբերի 21–ի կռվում զոհված և շուրջ մեկ ամիս անթաղ մնացած թուրքերի ու քրդերի դիակներ, լսում են հեռվից եկող թնդանոթաձգության ձայներ⁷⁵: Շատ վիրավորներ մահացել էին սառնամանիքից, քանի որ գիշերները որոշ քրդեր գալիս ու գողանում էին իրենց ազգակիցների հագուստը: Թումանյանը վկայում է. «Ճամփի երկու կողմը, Դիաղինից մոտիկ, տեսանք ընկած համիդիե քրդերի դիակները, որը կիսամերկ, որը շորը հագին: Մի ամիս առաջ հոկտեմբերի 22–ի կռվում էին սպանված»⁷⁶: «**Դիակների ձորը**» սարսուռ է ազդում. **Դիաղինի** ձակատամարտից հետո քրդերից ոմանք ոչ միայն չեն հուղարկավորել իրենց ցեղակիցներին, այլև շատ մահամերձների հագուստն են հանել՝ իրենց պահել՝ նրանց կյանքը փրկելու փոխարեն: **Ղրզըլ–Դիզեում** հանդիպում են ռուս այն հարյուրյակներին, որոնք երգելով վերադառնում էին **Մոսունի** շրջակայքի քրդերին պատժելուց, նրանց յոթ գյուղերը հիմնահատակ ավերելուց հետո՝ երկու ռուս զինվոր սպանելու համար:

Նոյեմբերի 23–ին Դիաղինում էին, որը մի մեծ քրդաբնակ գյուղ էր փոքրիկ լեռան ստորոտում, ուր կային նաև հանքային ջրեր: Այն նույնպես բացառություն չէր՝ որպես համատարած թշվառության ու աղքատության վայր: Քրդերի տները, գրողի նկարագրությամբ, փոքրիկ էին, խավար, կավաշեն, ցածր դռներով, նեղ պատուհաններով և սոսկալի կեղտոտ: 400 տներից միայն 14–ն էին հայերին պատկանում: Հանձնախումբը գիշերում է գյուղի ավազ («ստարշինա»), «հայտնի Մանուկի թոռ» Մելքոն (Միհրան) Մանուկյանի տանը: Երեք–չորս գիշեր շարունակ

74 Նույն տեղում, էջ 358:

75 Թումանյանի հավաստիացմամբ՝ Բայազետը թուրքերը թողել էին ռազմական նկատառումներով՝ շուտով վերադառնալու պայմանով: Սակայն բուքն ու փոթորիկը խանգարել էին, և մինչև ռուսների գալը 3 օր շարունակ քաղաքը մնացել էր հայերի ձեռքին: **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 360:

76 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 363:

փախած քրդերի շների «խմբովին» ոռնոցը թույլ չէր տալիս հանգստանալ որևէ մեկին:

Դիադինի միջով անցել էր 6000 մարդուց բաղկացած թուրքական զորաբանակ, սակայն այստեղ բնակիչներին առանձնապես վնաս չէին տվել, հավանաբար այն պատճառով, որ հիմնականում քրդեր էին: Այնուհետև 14 տուն հայեր վրեժ են լուծել 400 տուն քրդերից: Ամիսներ շարունակ բնակիչները կերակրել էին համիդիներին, իսկ հետո արդեն ռուսներն էին տիրացել թուրքերի՝ գյուղից հավաքած տուրքին՝ ցորեն, գարի և այլն, որը փախչելիս ստիպված էին եղել թողնել: Իսկ հայերը, սպասելով ռուսներին, իրենց տների դրսի դռների ու ներսի պատերի վրա խաչեր էին նկարել՝ խուսափելու համար նոր կոտորածից: Թումանյանն արձանագրում է նաև այս շրջանում քրդերի ոչ միանական քաղաքականության մի քանի օրինակներ. նրանց մի մասը միանում էր համիդիներին, մյուս մասը՝ ռուսների կամ հայերի հետ կռվում իրենց ազգակիցների դեմ: Գրողի օրագրում կարդում ենք. «Մուստաֆա բեկն անձնատուր է եղել, իսկ իր որդին **Դութախի**⁷⁷ տակ ալայը⁷⁸ կռվում էր մերոնց դեմ ... **Ռասուլ բեկը** անձնատուր է եղել, նրա եղբայրները՝ **Ռզգամ բեկ, Ջամշուդ բեկ, Սայիդ բեկ և Խալիդ բեկ** ռուսների հետ էին առաջ շարժվում:

Սալիմ փաշա անձնատուր եղավ, խոստացավ բերի իր ալայները, ու չեկավ:

Անձնատուր եղան **Սայիդ բեկ, Այիբ փաշա, Թորունի և Ռասուլ բեկ, և Ամար բեկ և Աբդլ Բարի Բադիմ, Նազիր բեկ օղլի**: Եվ ոչ ոք չբերին հետները, և նրանց ալայները կռվում են մերոնց դեմ»⁷⁹: Թումանյանը եզրակացնում է. «Ըստ երևույթին, քուրդ բեկերից ու ազդեցիկներից ոմանք, որ իբր թե անձնատուր են, մնում են լրտեսելու ռուսական ուժը, իսկ իրենց ալայներն ու ցեղերը չեն բերել հպատակության, և նրանք կռվում են ռուս զորքի դեմ»⁸⁰:

Մոտ չորս օր **Դիադինում** մնալուց հետո հանձնախումբը շարունակում է ձանապարհը երկու լեռնաշղթաների մեջ ընկած **Ալաշկերտի հովտով, Եփրատի ափերով**, որի մեջ արդեն սառույցի բեկորներ էին լողում: Ճանապարհին հազվագյուտ ծառերը հիշեցնում էին հորդանների վայրենի վերաբերմունքը բնության նկատմամբ: Փոքրաթիվ հայերը փորձում էին ծառեր ու այգիներ տնկել, իսկ հարևան ցեղերը դրանք կտրում էին: Լսում են մի հայի վկայությունն այն մասին, թե ինչպես քուրդ ավազակախումբը ծառահատում է հայի նորատունկ այգին. «Մի օր մի քուրդ ավազակախումբ գալիս է բոլոր ծառերը կտրտում:

Ինչո՞ւ եք այդ անում, հարցնում է տերը:

Մենք չունենք այգիներ, դուք էլ չպիտի ունենաք, պատասխանում են քուրդերը»⁸¹:

Եվ իրոք, նկատում են, որ ծառերով ծածկված է միայն **Ուչքիլիսա**⁸² հայաբնակ գյուղը: Ծառեր նկատվում են նաև ողբերգական ձակատագրի արժանացած և այլևս գոյություն չունեցող **Ջետկան**⁸³ ավերակ հայաբնակ գյուղում: Դիադինից **Թաշլիչայ**⁸⁴ – **Սուֆլե** ճանապարհին հանձնախումբը պատահում է արաբների ցնցոտիներով 30–40 թուրք գերիների մի խմբի, որը համիդիների և իրենց նահանջի

77 **Դութախ** – գավառակ Էրզրումի նահանգի Բայազետի գավառի կենտրոնական մասում: 1915–1918 թթ. գավառի հայ բնակչության միայն չնչին մասը կարողացավ փրկվել:

78 **Ալայ** նշանակում էր 900 հոգուց կազմված զորախումբ (գունդ): Կարող է օգտագործվել նաև իբրև նրա հրամանատարի՝ ալայ-բեկի բնորոշում:

79 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 364–365:

80 Նույն տեղում, էջ 376:

81 **Շիրվանզադե**, Եժ, հատ. 9, էջ 143:

82 **Ուչքիլիսան (Վաղարշակերտը)** Ալաշկերտի հովտի Ալաշկերտ գավառակի հայաբնակ գյուղերից էր:

83 **Ջետկան** (Ջեղեկան)– Էրզրումի նահանգի Բայազետի գավառի Ալաշկերտի գավառակի գյուղերից:

84 **Թաշլիչայ (Թաշլիջան)** –Էրզրումի նահանգի Բայազետի գավառի Դիադինի գավառակի գյուղերից, Դիադինից 15 կմ հարավ-արևմուտք: 1915 թ. ուներ 210 բնակիչ:

պահին կողոպտել էր Ուչքիլիսայի Ս.Հովհաննես վանքը, եկեղեցում եղած բոլոր գրքերն այրել, ձիերի համար ախոռ դարձրել և հաջորդ օրը նոր փախել: Տեղացիները նահանջից հետո ետ վերադարձող ռուս զորամասին սառը ընդունելություն են ցույց տալիս, որից զարմացած ու զայրացած վրացի սպային նրանք պատալխանում են. «Մենք մտածում էինք, թե արդեն տիրել եք, բայց որ ետ եք գալիս-մենք հիշեցինք անցյալ ժամանակների նահանջները, և թե ինչ է եկել մեր գլուխը դրանց հետևանքով»⁸⁵ :

Ի տարբերություն Շիրվանզադեի ու խմբի որոշ անդամների՝ Թումանյանը առաջարկում է այցելել **Ուչքիլիսայի** ճանապարհից մի փոքր հեռու գտնվող մեծ վանքը, որտեղ մի ժամանակ կաթողիկոսներ են օծվել: Վանքը շրջապատող քարաշեն բոլոր սենյակները ավերված էին, իսկ գմբեթի տակ բնակություն էին հաստատել աղավախները: Խորանները ռուսների համար մթերանոց էին ծառայում: Խումբը որոշել էր գիշերել Թաշլիչայում (Տաշլի Չայ): Թաշլիչայից Ղարաքիլիսա մեկնելիս ուղևորվում են Ղազի⁸⁶ (Ղազիքոյ): Եփրատի ձախ ափին գտնվող հայկական Զիրո, Քուփ, Ղռան, Խոջըր և Մանգասար գյուղերի բնակիչները արդեն գաղթել էին:

Հաջորդ գյուղը, որով անցնում է հանձնախումբը, **Զիրա կամ Զիրո** անունով մասամբ հայաբնակ, ավելի քրդաբնակ գյուղն էր: Թումանյանի վկայությամբ՝ **Զիրոյում** 12 տուն հայ, 60 տուն քրդեր էին ապրում: Նա հիշատակում է Զիրո գյուղից թուրքական կանոնավոր զորքերի փախուստը: Առաջինը այցելում են 3 անգամ թալանված մի եկեղեցի, ուր մնացել էր միայն Աստվածածինը՝ Հիսուսը գրկին: Այստեղ էլ Թումանյանը տեղեկանում է, որ նույնիսկ ռուսները հայոց սրբությունների հետ հաշվի չէին նստում: Մագրա և Մանգասար գյուղերի քահանաները ժողովրդի հետ միասին երգում են «Թագավոր փառաց» շարականը: Բանաստեղծը գրում է. «Իջանք, գնացինք եկեղեցի: Եկեղեցին գյուղի վերև խղճուկ, մերկ, ոչինչ չունի, ոչ վարագույր, ոչ սկիհ, ոչ մոմակալ, ոչ գիրք, մերկ միանգամայն: Պատմեցին, որ երեք անգամ կողոպտել են. ամեն բան տարել, մինչև անգամ սեղանի տախտակները...Սաստիկ հուզիչ էր էս գյուղում ու էս եկեղեցում: Եվ չոքեցինք կիսավեր եկեղեցում, կիսամերկ ժողովրդի հետ, թալանված սեղանի առջև ու թալանված քահանաները սկսեցին երգել-«Ապավինեցաք ի խաչ քո Քրիստոս»...Ամենիս էլ թվաց, թե առաջին անգամ եղանք թյուրքահայ գյուղում...»⁸⁷:

Թումանյանը կարողանում էր հուսադրել և հավատացնել, որ նեղ օրերին կհաջորդեն լավ օրեր, գյուղացիներին դիմանալու ու դիմադրելու կամք էր ներշնչում, մինչդեռ ինքն այդ պահին հուսադրողի ու քաջալերողի կարիք ուներ, քանի որ մեծ էր նրա հիասթափությունը: Նա տեսնում էր, որ ռուսների վերաբերմունքից հուսալիսաբաված է նաև տեղացի հայ բնակչությունը, բայց այլընտրանք չունի և լռելյայն տանում է ամեն ինչ, հանդուրժում նրանց պատճառած բոլոր գրկանքները՝ ռուսներին համարելով չարաց փոքրագույնը: Հենց այս գյուղում է լսում, որ եկեղեցական իրերը թալանողների մեջ եղել են նաև ռուսներ: Վերջիններս Ղարաքիլիսայում հայերի տները խուզարկելիս, հայտնաբերելով դրանցից մեկում պահ տված կաթոլիկ եկեղեցու արծաթե 2 սկիհ, բռնագրավել էին ու տարել «չորս հացով ծախել»⁸⁸, ըստ Շիրվանզադեի՝ 8 ռուբլով վաճառել մի հայի: Կաթոլիկ հայ քահանան Խոթեն եպիսկոպոսի մոտ անվերջ ողբում էր արծաթյա սկիհի համար: Խումբը գնում է սկիհը և վերադարձնում է քահանային: Թումանյանը գրում է.«երկու սկիհ էին տարել եկեղեցուց կոզակները ծախել՝ մինը 40 կոպեկ, մյուսը՝ 5 ռ. 40 կոպեկ, առանք 12 ռուբլով, վերադարձրինք կաթոլիկ եկեղեցուն»⁸⁹ :

85 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 366:

86 Ղազի գյուղը 1909 թ. ուներ 105 (15 ընտանիք) հայ բնակիչ: Գյուղում կար Սուրբ Եղիա եկեղեցին՝ կառուցված 1870-ին:

87 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 369:

88 Նույն տեղում:

89 Նույն տեղում, էջ 387:

Թումանյանը գրուցել է նաև Արդահանի գեներալ նահանգապետի հետ, նա հաստատել է ռուսների կողմից հայ խաղաղ բնակչության թալանը և դա բացատրել է նրանով, թե ռուսական բանակը բավարար չափով ապահովված չի եղել պարենով ու նույնիսկ ռազմական պաշարով: **Ղազի** գյուղի բնակիչները դժգոհում էին ռուսների վերաբերմունքից՝ ասելով. «Մենք ճամփի վրա ենք, ոտի տակ ենք: Ինչ որ թալանեցին, ինչ որ ուզեցին՝ տվինք – էլ ոչինչ չունենք: Ուզում են, լեզու էլ չգիտենք, որ հասկացնենք, մեզի կզարկեն»⁹⁰:

Ջիրոյում լսում են Գյուզալ անունով 18-ամյա առևանգված հայ աղջկա և ռուսների կողմից նրան ծնողներին վերադարձնելու պատմությունը⁹¹: Ջիրոյին հաջորդում են **Ղազի և Յոնջալու, Երինջալ**⁹² գյուղերը: Երինջալում այցելում են տեղի կիսով չափ գետնափոր եկեղեցին: Ավերված եկեղեցու թշվառ ու ողորմելի տեսքն ազդում է ամենքի վրա՝ խորհել տալով, թե ինչպիսի պայմաններում է հայր անասան պահպանել իր նախահայրերի կրոնը: Յոնջալու գյուղի եկեղեցում Թումանյանը նկատում է, որ այդ գյուղերում սաստիկ շատ են երեխաները, իսկ «Կանայք վշտոտ դենք ունենին, բայց գեղեցիկները շատ են»⁹³: Այստեղ՝ եկեղեցում, նույնպես հնչում է Թումանյանի խոսքը: Եկեղեցուց դուրս գալիս ամենքի առջև իր ազդեցիկ տեսքով կանգնում է գյուղի քահանա տեր Հովհաննեսը, ում միևնույն արդուն թուրք զինվորները նոր–նոր էին սպանել: Խմբի անդամները քարանում են նրա արցունքների առջև ու մխիթարանքի խոսքեր չեն գտնում ասելու:

Ի վերջո ուշ երեկոյան հասնում են **Ղարաքիլիսա**, կենտրոնական մի մեծ ավան, ուր այդ պահին գտնվում էր ռուսական զորաբաժնի շտաբը: Ղարաքիլիսայում գյուղացիները «վառված» էին ոչ միայն թուրքերի պատճառած դժբախտություններից, այլև **Աբացիևի**⁹⁴ թողտվությամբ ու հրահանգներով ռուսների թալանից ու իրենց պատճառած նեղություններից: Թումանյանը գրում է. «250 խանութ կողոպտել են մինագամայն ու ավերել ռուս կազակները: Այժմ 50–ի մեջ զորք է մնում»⁹⁵: Ռուսների դեմ այնքան էին զայրացած այս շրջանում, որ առանձնահատուկ ընդգծում էին որոշ թուրքերի հայանպաստ գործողությունները: Խմբապետ Խաչատուրը գրողին հավաստիացնում էր, որ «Թուրքերը տաճկաց նահանջին պաշտպանել են հայերի ինչքն ու կյանքը, նույնիսկ գենքով»⁹⁶:

Նոյեմբերի 26–ին Մեսրոպ Եպիսկոպոսի անունով, երբ նա արդեն մեկնել էր Թիֆլիս՝ ցարին դիմավորելիս կաթողիկոսին ուղեկցելու, Ասմարից՝ Արմեն Գարոյից, հեռագիր է ստացվում, որտեղ հնչում է ահազանգ ռուսների նահանջի մասին: Այդ պահին Արմեն Գարոն կատարում էր Երկրորդ կամավորական ջոկատի հրամանատարի պարտականությունը , քանի որ հոկտեմբերի 30–ին ռազմաճակատում վիրավորվել էր Դրոն, ում ենթակայությամբ որպես նրա տեղակալ

90 Նույն տեղում, էջ 370:

91 Խոսքը վերաբերում է 18–ամյա Գյուզալ Ղազարյանցին, ում պատերազմից երեք օր առաջ առևանգել էր համադեական Ռասայուլ բեկի հիսնապետ Հասան էֆենդու որդի Իսայր և տարել լեռները: 12 օր անց ռուսները նրան վերադարձրել են ծնողներին, Իսայր 4 եղբայրների հետ շարունակել է ազատ շրջել Արդաղի լեռներում և սպառնացել է վրեժ լուծել աղջկա բոլոր մերձավորներից, եթե իր «ավարը» ետ չտան (Շիրվանզադե, ԵԺ, հատ. 9, էջ 149):

92 **Երինջալ** Էրզրումի նահանգի Բայազետի գավառի հայաբնակ գյուղերից էր :

93 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 370:

94 Խոսքը վերաբերում է **Դմիտրի Կոնստանտինովիչ Աբացիևին (Չամբոլատ Կոնստանտին Աբաղձին, Աբացև) (03.12.1857–04.06.1936, Քելզրադ)**: Ազգությամբ օս, ծնվել է դեկտեմբերի 3–ին Հյուսիսային Օսիայի Կադգարոն գյուղում, մասնակցել 1877–1878 թթ. ռուսաթուրքական պատերազմին, երեք անգամ արժանացել Սուրբ Գեորգիի խաչ շքանշանին, Սուրբ Գեորգիի չորրորդ աստիճանի շքանշանը ստացել է 1916 թ. հունիսին՝ Բիթլիսը (Բաղեշ) գիշերային հարձակումով գրավելու համար: Առաջին աշխարհամարտի տարիներին կռվել է Սարիղամիշում, Ալաշկերտի շրջանում: Ռուսաստանի խորհրդայնացումից հետո կռվել է սպիտակզավարդիականների շարքերում բոլշևիկների դեմ, այնուհետև դիմել է փախուստի՝ Հարավսլավիա:

95 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 371:

96 Նույն տեղում:

կովում էր Արմեն Գարոն:

Խմբի հաջորդ նպատակն էր Ղարաքիլիսայից անցնել Դուբախ՝ հանդիպելու հայ կամավորներին, այնտեղից էլ՝ Բասեն: Աբացիկը կտրուկ մերժում է՝ պնդելով, որ առանց պաշտոնական զինադադարի չի կարող թույլ տալ նրանց անցնել ռազմաճակատի գիծը: Խումբը համառում է՝ ասելով, թե հենց ճակատամարտին ներկա լինելու համար են հասել այդտեղ և չեն վախենում գերի ընկնելուց: Սակայն գեներալը վճռական էր տրամադրված: Ամենքը հասկանում են, որ նա պարզապես չէր ուզում, որ խումբը հանդիպեր հայ կամավորներին: Աբացիկը արգելում է խմբին անցնել նաև **Դայար (Դահար)**, որն ընդամենը երկու օրվա ճանապարհ էր, և ամեն կերպ խոչընդոտում է խմբի ու հայ կամավորների հանդիպմանը: Օսական ծագումով «ոչ ռուս» Աբացիկը հեզմական տոնով է խոսում հայ կամավորների մասին, տեղացի հայ բնակչությանը մեղադրում միայն կողոպուտով զբաղվելու մեջ ու պահանջում է ետ գնալ եկած ճանապարհով և **Իգդիրի** վրայով անցնել Սարիղամիշի կողմերը: Հանդիպմանը ներկա էր նաև **գլխավոր շտաբի** գեներալ **Լեբեղիսկին**⁹⁷, ով կրկնում էր այն ամենը, ինչ ասում էր Աբացիկը:

Թումանյանը գրեթե բառացի վերատադրում է հայերի նկատմամբ չարությամբ լցված ցարական գեներալի խոսքերը. «Հայերը թալանով են զբաղված ու թալանել են բոլոր քրդերի ու թուրքերի տները...Մենք քրդերին ու թուրքերին գնդակահար անել ենք տալիս թալանի համար, իսկ հայերին մինչև օրս ոչ մեկին չենք պատժել, ձեռք չի գնում, որ գնդակահար անել տամ, և մենք հրաման ունենք, որ հայերին առանձնապես հովանավորենք ու զենք տանք»⁹⁸: Աբացիկը բացահայտ ստում էր՝ ասելով, թե միայն քրդերին ու թուրքերին են զինաթափ անում, իսկ «հայերին զենք ենք տալիս, և հայի զինաթափության մի դեպք չի եղած»⁹⁹: Հանձնախումբը համոզվել էր, որ հայերին ամենից շատ **զինաթափ էին արել հենց Ղարաքիլիսայում**: Աբացիկը զրպարտում էր նաև հայ կամավորներին, իբր՝ «Նրանք էլ են կողոպուտով զբաղված»¹⁰⁰: Երբ հանձնախմբի անդամները բերում են **շամշաղինով** քրդերի կողոպուտի բացահայտ փաստերը, Աբացիկը հակադարձում է, թե հայերը **խեղճ** քրդերի «բոլոր ունեցած-չունեցածն ու բոլոր ձիանքն են կողոպտել»¹⁰¹: **Աբացիկը** չի կամենում թաքցնել նաև հայ կամավորների նկատմամբ իր հակակրանքը, որը պայմանավորված էր վերջիններիս հաղթանակներով ու ճակատամարտերում ցուցաբերած արիության բազմաթիվ օրինակներով: Հայ կամավորները կարողացել էին հայկական ու քրդական գյուղերից պարեն հայթայթել ռուսական զորքի համար, իսկ գեներալը դրա անունը դրել էր կողոպուտ և ռազմի դաշտում հայ կամավորներին չտեսնելու իր ցանկությունն ամենևին չէր թաքցրել: Թվում էր՝ Աբացիկը ցանկություն չուներ կովել մահմեդական զորքի դեմ: Նրա զրպարտություններից մեկն արձանագրել է բանաստեղծը. «Կամավորների մասին ասում է. ... մեր ետևից գալով սկսեցին խոտ, ուտելիք և այլ կարիքներ լրացնելու համար վերցնել թուրք ու քուրդ գյուղերից – և ամենից, և սաստիկ վնասում է մեր վարկին... Տպավորությունն էնպես եղավ, որ էդ ամենը մեր գիտությամբ է կատարվում: Դրա համար էլ ես նրանց առաջարկեցի ... եթե ուզում եք, գնացեք մեզանից առաջ, իսկ մեր ետև «(ԵՄԻ-ում)» թույլ չենք տալ էդպես բաներ: Եվ մինչև անգամ ասացի – եթե էդպես պետք է լինեք, լավն էն է, որ

97 Խոսքը վերաբերում է 1915 թ. հուլիսի 3-ից գեներալ-մայոր **Եվգենի Վասիլևիչ Լեբեղիսկուն (24.12.1873^{***})**: Սերում էր Օրյոլի նահանգի ազնվականական տոհմից: Կրթությունը ստացել էր Թիֆլիսի կաղետական դպրոցում: 1909 թ. դեկտեմբերի 22-ին նշանակվել էր Երկրորդ կովկասյան կազակային դիվիզիայի շտաբի պետ, 1916 թ. հոկտեմբերի 3-ից 6-րդ հատուկ հետևակային բրիգադի, իսկ 1917 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. մայիսը՝ Կովկասյան ռազմաճակատի հրամանատար:

98 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 372-373:

99 Նույն տեղում, էջ 373:

100 Նույն տեղում:

101 Նույն տեղում:

դուք չլինեք»¹⁰²:

Ղարաքիլիսայում Աբացիևի հովանավորությունն էր վայելում քուրդ ցեղապետ **Սելիմ փաշան**, ով իբր «անձնատուր էր եղել» ռուսներին, իսկ նրա երկու որդիները՝ **Սայիդ և Ռատուլ բեկերը**, շարունակում էին պատերազմել ռուսական զորքի դեմ: Նա ռուսների հետ «բարեկամացել» էր, քանի որ պատերազմի ճակատագիրն անորոշ էր: Սելիմ փաշայի մասին տարածված էր, որ ամեն օր թուրքերին գաղտնի տեղեկություններ է հաղորդում ռուսական զորքերի յուրաքանչյուր քայլի մասին:

Սելիմ փաշան հանդիպում է նաև Թումանյանին ու հանձնախմբի այլ անդամների և Աբացիևի թարգմանիչ, երիտասարդ Խաչատուրի, Միհրան անունով վաճառականի ու Հակոբ աղայի օգնությամբ ասիական շողոքորթությամբ գրույցի բռնվում ազգերի բարեկամության, Ավետարանի և Ղուրանի եղբայրության, սիրո ու խաղաղության քարոզների մասին: Իրականում քուրդ փաշայի գալու բուն նպատակն այն էր, որ անվանի հայերը իրենց հեղինակությունն օգտագործեին և ստիպեին տեղացի հայերին իրենց վերադարձնել «իր» տավարն ու ոչխարները: Նա եղել էր հայկական գյուղերը թալանողներից մեկը, և հայերն ընդամենը ետ էին վերադարձրել իրենց ունեցածը: Աբացիևի ազդեցության շրջանում հայերն այնքան էին մեղադրվում թալան կազմակերպելու մեջ և պատժվում, որ նույնիսկ շատ պարտատերեր վախենում էին իրենց պարտքը ստանալ այդ ժամանակ ընդունված բնամթերքի տեսքով:

Աբացիևը հայերի կողմից թալանի մասին իր գրպարտություններով անհանգստացրել էր հատկապես այդ պահին Երկրորդ կամավորական խմբում Դրոյին փոխարինող Արմեն Գարոյին, որպեսզի վերջինս միջոցներ ձեռնարկի համատարած թալանի դեմ: Գարոն 1914 թ. նոյեմբերի 20-ին հրաման էր արձակել և բնակիչներին արգելել ցանկացած թալան¹⁰³: Բայց նա նկատի չէր ունեցել հայերին, որովհետև իբրև հայ կամավորական խմբի հրամանատար՝ նա երբեք չէր կարող հավատ ընծայել Աբացիևի որևէ խոսքին: Այդ մասին հավաստում էր Թումանյանը՝ վկայակոչելով Գարոյի նոյեմբերի 20-ի նամակը: Բանաստեղծը գրում էր. «Գեներալ Աբացևը մեզ հավատացնում էր, թե մեր խումբը առաջին դիրքերում չի – այլ առաջապահ զորքի ետևը: Ամսի 20-ից Գարոն իր նամակում ընդհակառակն է պնդում և հավատացնում է, որ **գեներալ Աբացևը կողմնապահ վերաբերմունք ունի և հարած է քրդական քաղաքականության»**¹⁰⁴ (ընդգծումը մերն է–Ս.Հ.)::

Ըստ բանաստեղծի՝ շատ գյուղերում ռուսները քրդերին ավելի շատ են պաշտպանում, քան հայերին: Խոսքը վերաբերում էր հատկապես Աբացիևի զորքերին: Գեներալի հետ գրույցը բավական էր, որ Թումանյանը եզրակացներ, որ նա հայատյաց է, ով բացի հայ բնակչությանն ու կամավորներին գրպարտելուց՝ փորձել էր քրդերին ամեն կերպ սիրաշահել ու համոզել, որ ռուսական զորքը նրանց համար է կռվում, թեև այդպես էլ չէր կարողացել քրդերի վստահությանն արժանանալ: Թումանյանը վկայում է, որ Երևանի զորաբաժնի գլխավոր գեներալ Աբացիևը ղեկավարվել է բացառապես քրդերի ցուցմունքով. մինչդեռ «նույն քրդերը միացել ու ջարդել են ռուսներին: Աբացիևը շատ քրդերի записка-ներ էր տվել, որ առաջնորդելու են իրենց: Կովից հետո կազակները գրպանները ման գալիս, սպանված ու վիրավոր քրդերի գրպաններից հանում են նույն записка-ները: Աբացիևը հայատյաց է»¹⁰⁵:

Թումանյանը զարմանում էր, որ իր խոսքերով՝ մահմեդական ծագումով գեներալը գլխավոր զորքի մեջ է այդ պատերազմում, ինչը, նրա կարծիքով, չէր բխում նաև Ռուսաստանի շահերից:

102 Նույն տեղում, էջ 374:

103 Նույն տեղում, էջ 375:

104 Նույն տեղում, էջ 379:

105 Նույն տեղում, էջ 350–351:

Թուրքական կանոնավոր գորքերի թալանի ու ավերածությունների մասին Թումանյանի օրագրում բազմաթիվ հիշատակություններ կան: Օրինակ՝ Ալաշկերտի հովտի 2000–անոց կանոնավոր գորքի մասին, որը փախել էր Ալաշկերտից՝ հովտի ողջ երկարությամբ իրականացնելով թալան ու ավերածություններ¹⁰⁶: Շիրվանզադեն նույնպես վկայում է, որ հայերը «Իրենց ունեցածը տալիս էին ռուս գորքերին և տալիս էին ձրի. ու դեռ կողոպտվում էին»¹⁰⁷:

Որքան էլ հիասթափությունը մեծ էր աբացիևներից, Թումանյանը ձգտում էր տեսնել նաև ռուսական գորքի՝ հայերի նկատմամբ լավ վերաբերմունքի օրինակներ: Նա գրի է առնում Խաչատուր Երևանցու պատմածները պատերազմի սկզբում Մոսունի մոտ ռուսների՝ հայերի նկատմամբ ուշադիր վերաբերմունքի մասին: Որոշ վայրերում ռուսները առավել մեծ չափով էին զգում հայ բնակչության օժանդակության կարիքը, խնդրում էին առաջնորդել իրենց թուրք ու քուրդ գյուղերը, աշխատում էին իսկապես գնել մթերքը հայ գյուղացիներից և ոչ թե շորթել. «Ոչխարը ծախվում էր 30–40 կոպեկ: Մոսուն մի խեղճ կին եկավ, թե մարդուս թուրքերը զինվոր են տարել, երեխեքս մանր են, սոված են, մի ոչխար տվեք, չտվին: Օֆիցերը հրամայեց՝ հինգը տան. տվին տարավ»¹⁰⁸:

Նոյեմբերի 25–ին մի պահակակետից մյուսը գնալու ճանապարհին ուղեկիցը պատմում է ռուսների՝ հայերին թալանելու տարբեր ձևերի մասին: Թումանյանը գրում է. «Ասում է դազախները 500 ոչխար հավաքեցին, թալանեցին, ծախեցին, նույն օրը ետ խլեցին՝ ուրիշին ծախեցին և էսպես առավոտից մինչև երեկո մի քանի անգամ ծախում են, ետ խլում ու ծախում»¹⁰⁹:

Ղարաքիլիսայից դուրս գալուց առաջ նոյեմբերի 27–ին ստացվում է շտաբի գլխավոր գնդապետ Լերեդինսկու նամակը, ըստ որի՝ Դելիբաբայի ճանապարհը վտանգավոր է, և պատրաստվում է թշնամու հարձակումը Սարիղամիշի վրա: Փաստորեն հարձակումից 14 օր առաջ Աբացիևին հայտնի էր այդ տեղեկությունը, մինչդեռ նա անփութորեն թե դիտավորությամբ չէր տեղեկացրել Սարիղամիշի ղեկավարությանը: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 28–ին, անցնելով **Իրից**¹¹⁰ գյուղի կողքով, ձախ կողմից Դութախի կովի, աջից՝ կողոպուտի ու ավարի դուրս եկած քրդերի հրացանաձգության աղմուկի, թանձր ձյունի տակ ուղևորվում են Ալաշկերտ: Ռազմաձակատի ոչ առաջին գծում, տարբեր գյուղերի միջև հայերի ու քրդերի զինված ընդհարումներ էին տեղի ունենում: **Խաչլու** գյուղի վրա ավազակախմբերի հարձակմանը դիմագրավելիս հայերին օգնության էին եկել կազակները, և նրանք երկու գոհ տալով փախուստի էին մատնել քրդերին: Գյուղը փրկվել էր ռուսական գորքի շնորհիվ. «Գյուղացիք ասում են, թե երեկ, եթե կոզակները 20–30 րոպե ուշ հասնեին–քրդերը Խաչլույում ամբողջ ավերելու էին»¹¹¹: Խումբը միջնորդում է, որ ալաշկերտցի երկու երիտասարդների դիակները հայաբնակ Խաչլու գյուղից ռուսների օգնությամբ դուրս բերվեն: Հրամանատարը հարգում է միջնորդությունը, և Շիրվանզադեի վկայությամբ՝ «Մի քանի ժամ անցած՝ դիակները բերվեցին այլանդակ վիճակում: Քուրդերը չէին մոռացել պղծել նրանց և պղծել ամենագազրելի կերպով: Մեկի բերանն արյունով լի էր և խցված...»¹¹²: Ընդ որում, հրացանաձգությունը սկսել էին Սելիմ փաշայի ազգակից քրդերը¹¹³:

106 Նույն տեղում, էջ 366:

107 **Շիրվանզադե**, ԵԺ, հատ. 9, էջ 165:

108 Նույն տեղում, էջ 377:

109 Նույն տեղում, էջ 375:

110 **Իրից (Իրիցքոյ)** – Արևմտյան Հայաստանի Էրզրումի նահանգի Բայազետի գավառի Ղարաքիլիսայի գավառակի գյուղերից է: Բնակիչները հիմնականում հայեր էին, որոնց մի մասը տեղահան եղավ 1915–1916 թթ. և հաստատվեց Արևելյան Հայաստանի Ղազանչի գյուղում, մի մասն էլ կոտորվեց:

111 **Շիրվանզադե**, ԵԺ, հատ. 9, էջ 379:

112 Նույն տեղում, էջ 161:

113 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 378:

Թումանյանը վկայում է նաև **Սելիմ** փաշայի ազդեցության տակ գտնվող և նրանից ղեկավարվող գյուղերի քրդերի հարձակումը հայաբնակ **Խայաբեկ** գյուղի վրա, որը գտնվում էր Խաչուից ներքև: Նոյեմբերի 28-ին գյուղի ողջ բնակչությունը ապաստան էր գտել Ալաշկերտում: Թումանյանին են մոտենում նոյեմբերի 27-ի կովից մազապուրծ Խաչու գյուղի ներկայացուցիչները և դժգոհում են, որ զենք չունեն հարձակումներին դիմագրավելու համար: Այն շրջանում, որտեղ Աբացիևի զորքերն էին, հայերին ոչ թե զինում, այլ զինաթափում էին: Ավելին, նույնիսկ թշնամին գիտեր, որ հանձին Աբացիևի իրենք բարեկամ ունեն հայերի դեմ: Նոյեմբերի 28-29-ին Թումանյանը պատմում է. «Նախընթաց օրը քրդերից բռնված ու թալանված խաչըլվեցիները պատմում են, թե քուրդ համիդիականները մեզ ասացին, թե ահա մենք թուղթ ունենք Սելիմ փաշայից, որ իրավունք ունի առած Ղարաքիլիսեի գեներալից (Աբացիևից), որ մեզ՝ հայերին կոտորեն ու գյուղերը քանդեն»¹¹⁴

Նոյեմբերի 28-ին՝ ժամը 4-ին **Ալաշկերտում էին**: Նրանց թուրք տանտերը՝ **Հաջի Իբրահիմ Ֆեյզուլա օղլին** քրդերի հարձակման ժամանակ իր տանը պատսպարել էր Վահանի և 11 այլ հայերի ընտանիքները և նրանց ազատել կոտորածից: Խմբին իր ծառայություններն է առաջարկում Նիզամադդին անունով մի քուրդ պատանի, որի ծնողները փախչելով՝ նրան հանձնել էին հայերի պաշտպանությանը: Ալաշկերտում բանաստեղծը գրուցում է մի ռուս հրամանատարի հետ: Գրողը հավաստում է. «Տեղիս կոզակների կոմանդիրը, մի համակրելի մարդ, մեր կամավորների կարևորությունը ընդունում էր անպայման, մանավանդ երկրին ծանոթ լինելու համար: Մենք ասում է միանգամայն անձանոթ ենք էդ ամենին»¹¹⁵: Թումանյանը, նկարագրելով մի հայ կաթուղիկ գյուղի խրճիթ-եկեղեցին, որի վրա դեռ մնում էին այրված սրբապատկերների մնացորդներ, գրում էր այն հայ գյուղացիների մասին, ովքեր իրենց օգնությանն էին դիմում ռուսների միջոցով իրենցից թալանված ապրանքի մի մասը ետ բերելու համար: «Թալանվողներից ոմանք, – գրում է բանաստեղծը,– որոնց ամբողջ տունը թալանած էին, խնդրում էին միջնորդել թալանողներին, որ իրենց մի վերմակ վերադարձնեն կամ մի տոպրակ այլուր, որ ապրեն»¹¹⁶:

Խումբն այցելում է Ներսիսյան դպրոցի հոգևոր սան, պատերազմի օրերին քահանա ձեռնադրված, ազգերի մեջ խաղաղություն ու համերաշխություն քարոզող նահատակված հայի՝ Հովսեփ Տեր-Մինասյանի գերեզմանը: Հենց Ալաշկերտում լուր է հասնում ռուսական զորքի առաջընթացի մասին, առաջին զոհը դառնում է չորս անչափահաս զավակների հայր քահանան. «Թուրքերը բռնում են նրան, ծեծում, անարգում, տանջանքների ենթարկում: Այնուհետև կտրում են նրա գլուխը, աչքերը հանելուց հետո տնկում են մի ցցի վրա և երեք օր, երեք գիշեր շրջեցնում Ալաշկերտի փողոցներում»¹¹⁷: Տեր Նիկոլը գերեզմանի մոտ կատարում է «Ի վերին Երուսաղեմը», որը արցունքներ է քանում ամենքի աչքերից: Նահատակվածի հայրը նույնպես քահանա էր Ղարսում և «ճանապարհի ծախք» չունենալու պատճառով որդու ոչ դին էր տեսել, ոչ գերեզմանը :

Նոյեմբերի 29-ին Ալաշկերտից խմբի անդամները Խաստուր (Խազմիր) գյուղի ուղղությամբ անցնելիս մոլորվում են, և քիչ է մնում ռուս զիվորների կրակոցների զոհը դառնան: Ալաշկերտից Դայար ձանապարհին կանգ են առնում Խաստուր գյուղում՝ ձիերին հանգստացնելու ու կերակրելու նպատակով: Խաստուրի 150 տուն հայերի կեսը լուսավորչական էր, մյուս կեսը՝ կաթուղիկ: Խումբն այցելում է թե՛ լուսավորչական, թե՛ կաթուղիկ եկեղեցիները: Կաթուղիկ եկեղեցին շատ ավելի

114 Թումանյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 379–380:

115 Նույն տեղում, էջ 378:

116 Նույն տեղում, էջ 379:

117 Շիրվանզադե, ԵԺ, հատ. 9, էջ 162:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՎԷՆ համահայկական հանդես 2 (ժԲ) փարի, թիվ 2 (46) ապրիլ-հունիս, 2014

լավ վիճակում էր, քան լուսավորչականը, քանի որ պատերազմից առաջ հայ կաթողիկները գտնվել էին եվրոպական հյուպատոսների հովանավորության տակ: Խաստուրը տեսնում են ավելի բարվոք վիճակում, քանի որ Մուստաֆա աղայի որդի **Հասան աղան** (Մեծը Սադըխ աղա Հասան) իր 4 եղբայրների հետ գյուղը պաշտպանել ու ազատել էր կոտորածից: 15 օր շարունակ նրանք գեներով պաշտպանել էին հայ գյուղացիներին և նրանց պատսպարել իրենց տանը¹¹⁸: Թումանյանն այստեղ ուրախության ու հպարտության պահեր է ապրում՝ պարզելով, որ գյուղում բոլորը «առանց բացառության» գրագետ են, ամենքը նույնիսկ ֆրանսերեն գիտեին, քանի որ Պոլսի Միացյալ ընկերությունը գյուղի դպրոցը միշտ պահել ու հովանավորել էր:

Խաստուրից հանձնախումբն ուղևորվում է և հավանաբար նոյեմբերի 29-ին՝ երեկոյան ժամը 5-ին հասնում է **Ջետկան**, որի բնակիչները փախել էին, սակայն ռուսական զորքի առաջխաղացման ընթացքում մի մասը վերադարձել էր:

Ջետկանը՝ բլուրներով շրջապատված, պարզապես փոսի մեջ էր և հեշտ թիրախ թշնամու համար: Քրդերին հաջորդել էին ռուսները, որոնք իրենց հերթին գյուղն առավել աղքատ ու թշվառ էին դարձրել: Թումանյանը վկայում է. «Ջեդեքան ամեն բան առնում են առանց վճարելու: Եվ մեծ քանակությամբ ալյուր, աթար ու խոտ են տարել: Մոտ 2000 սել, սելը 80 փոյթ: Ոմանք իրենց երեխանց սովորեցրել են՝ - Ей богы нет և միայն էսքանը գիտեն, կոզակի պատահելուն պես ասում են՝ Ей богы нет»¹¹⁹: Գյուղացիները առհասարակ ռուբլու արժեքը չէին պատկերացնում, և նրանց շատ հեշտ էր խաբելը, և երբ հասկանում էին, որ երեք ռուբլին 40 դուրուշ էլ չարժեր, արդեն ուշ էր լինում: Այստեղ չէին շտապում ոգևորվել ռուսների հաղթանակներով: Գյուղացիներից Պողոս Մուրադյանը հարցնում է. «Ռուս երկու անգամ մեր երկիր գրավեց ու ձգեց, գնաց. Նորեն պիտի ձգե...»¹²⁰: Այդ պահին շատերը չէին հավատում, որ ծերունու կանխագագացումը իրականություն է դառնալու, և հյուրերը համբերության կոչ են անում: Ծերունին հավատում է իր մեծապատիվ հյուրերին՝ խոստանալով. «Այն ատեն կմոռնանք բոլոր աղետներ»¹²¹:

Թումանյանը նկատում է, որ Ջետկանի գյուղացիները արևելահայ գյուղերի բնակիչներից ավելի կրթված են: Գյուղում, սակայն, ամենքն ուրախանում են՝ տեսնելով անվանի պոետին, որի երկերը հրաշալի գիտեին, և ոչ միայն այդ գյուղում: Թումանյանը գրում է. «Շատ տեղեր դեպք եղավ գյուղերում, որ ինձ մոտ էին գալիս պատանիներ, երիտասարդներ, խոսում էին իմ բանաստեղծություններից»¹²²:

Հանդիպելով սիրելի գրողին՝ հատկապես կանայք ու աղջիկները ուրախությունից լաց են եղել, խնդրել են մի հիշատակ թողնել իրենց: Նրանցից ոմանք հպարտությամբ ցույց են տվել իրենց տներում պահվող Թումանյանի երկերի հրատարակությունները: Թե ինչ հիշատակ է թողել, չենք կարող ասել, բայց որ կատարել է նրանց խնդրանքը, չենք կասկածում: Եվ դա երբեք ու ոչ ոք չի իմանա, քանի որ այս գյուղի անունը ընդամենը մեկ-երկու շաբաթ անց ասարտուով են հիշելու հանձնախմբի բոլոր անդամները:

Նոյեմբերի 30-ի առավոտյան Աբացիկից երկու նամակ են ստանում, որոնցով հաղորդվում էր, որ Դայարը (Դահար) ընկել է քրդերի ձեռքը, և միայն զինվորների

118 Հայերին օգնել էին թուրքերի նկատմամբ վրեժի զգացումից: Քուրդ երկու եղբայրները հավատացել էին «Երիտասարդ թուրքերի» հոչակած ազգերի եղբայրության ու հավասարության մասին խոստմանը, պայքարել նրանց հետ և սպանվել իբրև հեղափոխականներ: Այդ պատճառով էլ նրանց ազդեցության տակ գտնվող գյուղը՝ **Խաստուրը**, Թումանյանի հավատախիստամբ՝ «Որոշել է ու ձրի է տալիս ձիանց կերը զորքին, մինչև այժմ 3000 զորքի պետք է հոգացել» (Թումանյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 380):

119 Թումանյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 381:

120 Շիրվանզադե, Եժ, հատ. 9, էջ 170:

121 Նույն տեղում:

122 Թումանյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 380:

հետ կարելի է գնալ այնտեղ, միաժամանակ առաջարկում էր սպասել տրանսպորտին կամ վերադառնալ Ղարաքիլիսա: Եվս մեկ օր մնում են Ջետկանում: Հաջորդ օրը խումբը փորձում է գնալ Բաշքոյի (Դելի-Քեոյ) ուղղությամբ, սակայն պարզում են, որ այն էլ պաշարված է քրդերով, ինչպես որ Դահարն ու Խաչլուն: Որոշվում է Մասունի բարձունքներով վերադառնալ սահմանագլուխ և **Սարիղամիշի** վրայով գնալ ռազմաձակատ:

Հանձնախմբի՝ Ջետկանից հեռանալուց մեկ շաբաթ անց ռուսական զորքը Ալաշկերտի հովտից հեռանալու հրաման է ստանում: Ահաբեկված հայ բնակչությունը ռուսական զորքի հետ բռնում է գաղթի ճանապարհը: Ալաշկերտի խորքում գտնվող **Ջետկան ու Մոլլա-Մուլեյման** գյուղերը չեն կարողանում միանալ գաղթականների հոսանքին և ամբողջովին կործանվում են: Օրեր անց Ջետկանի բոլոր 90 բնտանիքները՝ յուրաքանչյուրը մոտ երեսուն անձից բաղկացած, այլևս գոյություն չունեին. «Մնում են նրա ավերակները և, ով գիտե, գուցե և՛ նրանց վրա ոռնող շները»¹²³: Երբ ռուսական զորքը հերթական նահանջից հետո նորից է վերադառնում Մոլլա-Մուլեյման և Ջետկան, այնտեղ տեսնում է կոտորածի գարիորելի տեսարան: Սպանդի ականատեսը հավաստում է. «Չկարողացա կրել տեսարանի կսկիծը և հեռացա»¹²⁴: Մոլլա-Մուլեյմանում տեսարանը սահմոկեցուցիչ էր. «Առաջին օրը մեր կազակները արյունաշաղախ փողոցներում ժողովեցին տասնևյոթ ծերերի, տասնուինը կանանց և քսանուհինգ երեխաների դիակներ, պատնում է ականատեսը: Եվ ինչ դրության մեջ, աստված իմ: Անարգված, հոշոտված, պղծված: Այստեղ գլուխներ, այնտեղ՝ ոտներ ու ձեռներ: Այստեղ կանանց ծծեր, այնտեղ նրանց մարմինները: Ծերերի աչքերը դուրս բերված: Մանուկների բազուկները կտրտած, երևի մայրերի փեշերից պոկելու հարար:

Եվ պետք է տեսնեիք, ինչպես էին լալիս մեր կազակները, արցունքները սրբելով իրենց թևերով: Մարդիկ, որոնց զգացումները բովվել էին արյան ու կրակի մեջ, փափկել էին, ինչպես երեխաներ...»¹²⁵: Նույնը կատարվել էր նաև Ջետկանում:

Ջետկանից մի քանի վերստ հեռանալուց հետո հանդիպում են **Արմեն Գարոյին**¹²⁶ և նրա զինվորներին, որոնց հետ անց են կացնում մոտ երկու ժամ: Վերջապես հանձնախումբը ստանում է իրեն հուզող հարցերի պատասխանը՝ անձամբ հայ կամավորներից: Ըստ Արմեն Գարոյի հավաստիացումների՝ հայ կամավորներից ոմանք լավ են կռվում, ոմանք անփորձ են, բայց բոլորն էլ՝ և՛ արևմտահայ, և՛ արևելահայ կամավորները, միասին կռվում են համերաշխ ու անձնվեր:

Դեկտեմբերի 1-ին բացի Դահարում¹²⁷ ռուսների նահանջի լուրը լսելուց՝ Խաստուր¹²⁸ գյուղի հրամանատարից տեղեկություն են ստանում Խաչլուի¹²⁹ սարերում ճանապարհների առավել վտանգավոր դառնալու մասին. նրանց հավաստիացնում են, որ նույնիսկ մի հարյուրյակ չի կարող երաշխավորել խմբի ապա-

123 **Շիրվանզադե**, ԵԺ, հատ. 9, էջ 166:

124 Նույն տեղում, էջ 174:

125 Նույն տեղում:

126 **Արմեն Գարո** (Գարեգին Փաստրմաձյան)–դաշնակցական գործիչ, Բանկ–Օտտոմանի հերոսներից, Օսմանյան խորհրդարանի պատգամավոր, կամավորական շարժման ակտիվ մասնակից, ՀՀ դեսպան Ամերիկայում:

127 **Դահար**–Էրզրումի նահանգի Բայազետի գավառի Ալաշկերտի շրջանի գյուղ՝ Ալաշկերտից 33 կմ հյուսիս–արևմուտք՝ Դելիբաբա լեռնանցքից ոչ հեռու: Գյուղից 10–11 կմ հեռավորության վրա պահպանվել է 39 տողից սեպագիր արձանագրություն:

128 **Խաստուր** – Էրզրումի նահանգի Բայազետի գավառի Ալաշկերտի գավառակի գյուղ՝ Արածանիի աջակողմյան վտակ Շառիան գետի ձախ կողմում, Էրզրում տանող ճանապարհի վրա: Թուլիս Մանուկ ուխտատեղիում հայտնաբերվել են ուրարտական արձանագրություններ:

129 **Խաչլու** – Էրզրումի նահանգի Բայազետի գավառի Ալաշկերտի գավառակի գյուղ՝ Ալաշկերտից 45 կմ հյուսիս–արևելք՝ Արածանիի վտակ Շառիան գետի ձախակողմյան վտակներից մեկի ափին: Ըստ ավանդության՝ գերեզմանատան բարձունքին կանգնած է եղել մի խաչ, որը ճառագայթներ է տարածել դաշտով մեկ, դրա համար էլ տեղացիները գյուղը կոչել են Խաչլուս, որը հետո դարձել է Խաչլու:

հովությունը դեպի Բաշքոյ¹³⁰ ճանապարհին: Նույն օրը **Խաստուր և Չըլկանի** գյուղերում մի ժամ հանգստանալուց հետո խումբը նորից վերադառնում է Ղարաքիլիսա: Այստեղ գրողը գրուցում է Հովհաննես Փոթիկյանի հետ, ով դարձյալ տխրեցնում է բանաստեղծին՝ բերելով ռուսների կողմից հայերին **զինաթափելու** կոնկրետ օրինակներ: Ըստ Փոթիկյանի՝ 20 օր առաջ, այսինքն՝ մոտավորապես նոյեմբերի 21-22-ին, «Կոզակները ներս մտան, խուզարկեցին, տարան 3 ատրճանակ, երեք հրացան, սնդուկներից ոսկի, արծաթե զարդերը. Կոմանդիրը ներս մտավ, ատրճանակով սպառնաց, բայց չկրցավ ետ առնի»¹³¹: Դա դեռ քիչ էր, Արմեն Գարոն էլ վկայում էր ռուս զինվորների **դասալքության**, կռիվներից խուսափելու և միայն գլխապահությամբ զբաղվելու մասին: Թումանյանը գրում է. «Արմեն Գարոն ասում է՝ ռուս զինվորները սրտով չեն կռվում և խուսափում են. ի միջի այլոց միշտ փոսերում մեծ քանակությամբ ետ են մնում պագած, իբրև թե դուրս են գնում, և մնում էդ դրության մեջ»¹³²: Հաջորդ օրը Արմեն Գարոն, տեսնելով Թումանյանի ծանր մաուզերը, նրան համոզում և ձեռքից վերցնում է: Գարոն կամենում էր վերադառնալ ռազմաձակատի առաջին գիծ, և դրա համար խնդրում էր ընդամենը հիսուն զինվոր և «Քսան հոգի ինտելիգենտ ուժեր»¹³³: Աբացիևը դարձյալ ամեն ինչ անում է, որ խումբը հայ կամավորներին չհանդիպի, իսկ կամավորներն էլ հնարավորինս անջատ-անջատ գործեն, հեռու լինեն միմյանցից և ամբողջովին կտրված՝ ռուսական զորքերից: Արմեն Գարոն Թումանյանին դժգոհում էր, որ Աբացիևը իրենց ուղարկում է ոչ թե կռվելու, այլ պահակային ծառայության. «Մենք ստիպված ենք *Караульная служба*-ի, որի համար չենք մենք:

Երկրորդ՝ դրկում է մեզ տեղեր, որ միանգամայն կտրված են իրենցից-Դերեկոր և Թունցին... որ գիտի գեներալ Սավիցկի¹³⁴:

Այժմ մեզ ուզում են կես անել և ձմեռելու դրկել-**Կոմար և Բիրյուսկ**: Իսկ մենք ուզում ենք վերադառնալ Ալաշկերտի դաշտը՝ կազմակերպվել և *Тыш*-ը մաքրել»: Հանձնախումբը խոստանում է միջամտել և Օգանովսկուն հանձնել նամակը¹³⁵:

Բաշքոյի ճանապարհն անապահով էր. հանձնախումբը դեկտեմբերի 2-ին ժամը 4-ին կանգ է առնում **Թաշլիչայում**: Ցավալի էր տեսնել, որ պատերազմական իրավիճակներում ոչ մի կողմից ոչ մի սրբություն չէր հարգվում: Տարբերությունը չափերի ու վայրենության աստիճանի մեջ էր: Այստեղ նկատում են, որ ռուս զինվորները թուրքերի մզկիթը դարձրել էին գոմ իրենց ձիերի համար: Թումանյանի հավաստիացմամբ՝ նույն այդ վայրերում «Թուրքերն ու քրդերն էլ, իհարկե, ավելի վատ էին վարվել հայոց եկեղեցիներում – ոչ միայն ձիանքը ներս քաշել, այլև կողոպտել, էրել ու Բրիստոսի աչքերին հրացանով նշան բռնել»¹³⁶:

50 անձից կազմված խմբով Թումանյանը հաղթահարում է Դիադինի բարձունքը, այնուհետև իջնում ձորեր ու նորից բարձրանում ձիով մինչև Մոսունի գառիվայրը, որտեղ բոլորը ստիպված էին իջնել ձիերից և բուքը, ձյունն ու սառույցը հաղթահարել ոտքով: Չէին դիմանում նույնիսկ ձիերը՝ անվերջ սառույցների վրա ընկնելով ու բարձրանալով: Դեկտեմբերի 3-ի երեկոյան հասնում են Մոսուն հայաբնակ գյուղը, որը կիսում էր մյուս հայ գյուղերի ձակատագիրը՝ կողոպուտ, սպանություններ, բռնաբարություններ: Գիշերում են Մոսունում և ինչպես ամենուր, լսում ողբեր ու գանգատներ: Դրանք վերաբերում էին նաև ռուսներին, որոնք այստեղ էլ «իրենցից ինչ-որ առնում են, ոչինչ չեն վճարում»¹³⁷: Եվ դա ասես քիչ

130 **Բաշքոյ** – Էրզրումի նահանգի Էրզրումի գավառի Խնուսի գավառակի քրդաբնակ գյուղ՝ Խնուսից 9,5 կմ հյուսիս-արևմուտք, Արածանիի ավազանին պատկանող գետակներից մեկի ավին: 20-րդ դարասկզբին կար 23 հայ ընտանիք:

131 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 382:

132 Նույն տեղում:

133 Նույն տեղում:

134 Գեներալ Ի.Վ.Սավիցկին 66-րդ հետևակային դիվիզիայի համանատարն էր:

135 Նույն տեղում, էջ 383:

136 Նույն տեղում, էջ 384:

137 Նույն տեղում:

էր, ռուսները շրջաբերական էին տարածել՝ «խտրություն չդնել հայի, թուրքի ու քրդի մեջ...»¹³⁸: Վաղ առավոտյան Մոսունից դուրս են գալիս և ուղևորվում Օրգով, Իգդիր:

Իգդիրում նորից հանդիպում են Օգանովսկուն և նրանից տեղեկանում, որ կարգադրություն է եղել օբյեկտիվ տեղեկագիր ներկայացնել թալանի մասին: Կովկասի ընդհանուր հրամանատարությունը որոշում էր կայացրել չհավատալ քրդերին, պահանջել նրանց գեներն ու ձիերը: Գեներալ-նահանգապետ Դրյագինի օգնական **Պողգուրսկին**¹³⁹ վկայել է, որ Արդահանի կողմերում «Կոզակները թալանում են ոչ միայն հայերի գյուղերը, այլև մավականների գյուղերը»¹⁴⁰: Օգանովսկին իր հերթին ներկայացրել է մի դրվագ, թե ինչպես թալանված ապրանքը գնողների գրույցից պարզվել է, որ թալանողները եղել են ոչ թե հայերը, այլ ռուսները: Օգանովսկուց լսած մխիթարական լուրերից մեկն էլ այն էր, որ տեղեկանում են Կովկասի ընդհանուր հրամանատարության կարգադրությանը՝ «չհավատալ ոչ մի քրդի, գլխավորներին բռնել, պահանջել բոլորի գեներն ու ձին»¹⁴¹: Բացի այդ հրամայվել էր 500 հրացան (բերդան) տրամադրել Ալաշկերտի ռազմաճակատի հայերին ինքնապաշտպանության համար: Օգանովսկին խոստովանում է ռուսական զորքի կատարած թալանի և ոչ օրինական գործողությունների մասին: Նախ՝ համիդիեն թալանում է հայերին, ապա երբ հայերը գնում են իրենց ունեցվածքը ետ ստանալու, ռուսական զորքը միջամտում է, և ինքն է սկսում զբաղվել թուրքի՝ հայերից թալանած ապրանքը վաճառելով: Հատկապես ճանապարհների վրա գտնվող գյուղերին զորքը ոչ միայն թալանում էր, այլև զինաթափում: Օգանովսկու խոսքերից պարզ էր դառնում, որ «Զորքի արածն էլ հային են վերագրում»¹⁴²: Գեներալը փորձում էր նաև արդարանալ՝ ասելով, որ քառասային դրության մեջ դժվար էր ասել, թե ով է սպանողն ու թալանողը: Նա առաջարկում է հայկական կամավորական բանակի թիվը հասցնել 10000-ի և նրանց համար գեներ ձեռք բերել ձապոնիայից:

Դրությունը քառասային էր, բայց զորքի թալանն այնքան համատարած էր, որ չնկատելն անհնար էր, պարզապես հայերին մեղադրելը այդ պահին բխում էր հայերի հզորանալու անհանգստությունից և ցարիզմի գաղութատիրական քաղաքականությունից: Ալաշկերտի ռազմաճակատում ապրող հայերին նախ 500 բերդան հրացան էին բաժանել, հետո մի մասը խլել, թե իբր դրանցով թալանով են զբաղվում: Իսկ Բայազետի ու Դիադինի շրջանում գեներների ընդհանուր թիվ հասնում էր 70000-ի:

Դեկտեմբերի 5-ին հիասթափված, հոգեկան ու բարոյական ցնցումներից տանջահար վերադառնում են Էջմիածին: Երկու օր անց գնում են Երևան, որտեղից էլ՝ Ալեքսանդրապոլ, այնտեղից Սարիղամիշ մեկնելու նպատակով:

Դեկտեմբերի 9-ին Գևորգ 5-րդ կաթողիկոսը գնացքով անցնում էր Ալեքսանդրապոլով, և հանձնախումբը հանդիպում է նրան: Հայրապետը Թիֆլիսից էր վերադառնում՝ նոյեմբերի 26-ից 29-ը ընկած ժամանակահատվածում՝ Նիկոլայ Երկրորդից հուսադրված¹⁴³: Նա Թիֆլիսից դուրս էր եկել դեկտեմբերի 7-ին և դեկտեմբերի 9-ին Ղալթախի կայարանում զրուցում է հանձնախմբի հետ և հուսադրում նրանց: Այդ պահին ռուսական իշխանությունները աշխատում էին սիրաշահել հայերին՝ ռազմի դաշտում ապահովելու համար ռուսական կողմի հաղթանակը: Հետևաբար հայ կամավորների մասին ռուսական բամբասանքներն այլևս կարևոր չէին: Ուստի և

138 Նույն տեղում, էջ 385:

139 Խոսքը վերաբերում է գեներալ-նահանգապետի օգնական, 1914 թ. հուլիսի 19-ից գեներալ-լեյտենանտ **Ֆյոդոր Ալեքսանդրովիչ Պողգուրսկուն (Պողգուրով)** – 02.12.1860 –1929, Մոսկվա: Ծառայել է Նիժնի Նովգորոդում, հավանաբար այդ պահին ինչ-ինչ հանձնարարություններով եղել է Կովկասում:

140 Նույն տեղում:

141 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 389:

142 Նույն տեղում, էջ 386:

143 Նույն տեղում:

հանձնախմբի ուղևորության բուն նպատակը կորցրել էր իր արդիականությունը:

Սակայն, ինչպես երևում է Փիլիպոս Վարդապարյանին ուղղված ղեկավարների 10-ի նամակից, Թումանյանն առանձնապես չի հուսադրվում. հուսախաբությունն ու ճնշող տպավորությունները ռուս գեներալներից ու իշխանավորներից շատ ավելի մեծ էին, ուստի ապագայի հետ կապված իր անհանգստությունների մասին նա գրում է. «Անկարելի է նամակով պատմել տեսածներս ու լսածներս, դրա համար էլ ավելորդ համարեցի գրել մինչև այժմ և այժմ էլ գրեթե նույնն եմ անում – թեև նամակ եմ գրում: Ընդհանրապես շատ տխուր են տպավորություններս և շատ հեշտ կարող ենք աղետալի դեպքերի հանդիպել, էնքան խախուտ է մեր վիճակը»¹⁴⁴: Դեկտեմբերի 10-ին նա արդեն գիտեր, որ թշնամին ետ է գրավել մի շարք քաղաքներ ու գյուղեր, որոնք ընդամենը նոյեմբերի 19-ին ազատագրել էին հայ կամավորական խմբերը:

Որքան էլ իրադրությունը փոխվել էր, Թումանյանը չի հրաժարվում ռազմաճակատ մեկնելու մտքից և որոշում է գնալ Սարիղամիշ, այնտեղից՝ ռազմաճակատի առաջին դիրքեր: Խուսմբն իր հետ վերցնում է տեղական և Թիֆլիսի Ազգային բյուրոյի տրամադրած կես միլիոն ծխախոտ, 100 փուլ շաքար, 34 փուլ թեյ՝ զորքերին բաժանելու համար: Ճանապարհին հանդիպում են Ռումինիայից եկած 400 կամավորների: **Դեկտեմբերի 11-ին** հասնում են **Սարիղամիշ**, հարկադրված գիշերում են այնտեղ: Տեղի քահանան պատմում է **Քեփրի (Քեփրի-Քյո)** գյուղից ռուսական զորքի նահանջի միջոցին՝ կեսգիշերին, սկսված գաղթի մասին: Ռուսները ճանապարհին օգնել էին կանանց ու երեխաներին, տալով նրանց իրենց ձիերը, վերնագգեստը, շատերին կերակրել էին, պահել երեխաներին մինչև նրանց ծնողների գտնվելը: 8000 գաղթականներ կենտրոնացել էին Սարիղամիշում, որտեղից պիտի ցրվեին շրջակա գյուղերը: Թումանյանն այցելում է նրանց և ականատես լինում Նպաստամատույց ընկերության եռանդուն գործունեությանը: Այս շրջանում բանաստեղծին հայտնի է դառնում, որ տեղի կայագրորի նախկին պետ **Կ.Ս. Սոյունենկոն**¹⁴⁵ հայերի դժգոհություններին պատժիչ գործողություններով էր պատասխանում: Բանաստեղծը վկայում է. «Թիֆլիս են դրկած արքորելու, իբրև պետության դավաճաններ Կարապետ Սալխասյան, Պետրոս Մինասյան, Կարապետ Շամցիյան, Ալեքսանդր Տիրատուրյան, Հնայակ Խաչատրյան (Տեր Տաճատի հսկողության տակ), ենթադրում են, որ նախկին гарнизонный начальник Солоненко-ն է արել»¹⁴⁶: Ինչպես երևում է բանաստեղծի գրառումներից, այս շրջանում հայ պահեստայինների դեմ ռուս զորավարներին տրամադրել են նաև մի քանի վրացիներ. «Ջորքի մեջ հայերից դժգոհ են միայն запасной-ներից և հատկապես շորագայգիներից: Տարածողները գլխավորապես վրացիք են եղած»¹⁴⁷: Այստեղ առավել ակնհայտ է դառնում նաև վրացիների մասնակցությունը հայերին անջատողականներ ներկայացնելու գործում: Գրողը վերստին հանդիպում է իր բնորոշմամբ՝ «հայատյաց» գեներալի՝ **Տրամբիցկոն**¹⁴⁸, և ներկայացնում է հայերի դեմ նրա համագործակցությունը էվակուացիոն կետի ղեկավար վրացի **Ապրևանաղ-ձեի** հետ: Թումանյանը վկայում է. «Տեղական գարնիզոնի գլխավոր Թրամբիցկի генерал-ը սոսկալի հայատյաց և առանց քաշվելու տարածում է ամեն տեսակ վատ տեղեկություններ ու տրամադրություններ: Եվ գլխավորապես Эвакуационный пункт Ареванадзе: Վրացիք և հրեաները (բժիշկ Շամալ՝ Սարիղամիշ հայերին անվանում է ավտոնոմիստներ). Բարաջանյանի ընդհարումը Թրամբիцк-ու հետ»¹⁴⁹:

144 **Լեո**, Անցյալից, էջ 313:

145 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 10, էջ 220:

146 **Կուստանդին Ստեփանովիչ Սոյունենկոն** ռազմական ինժեներ էր, գեներալ-մայոր: Նա ռուս-թուրքական պատերազմի մասնակից էր, 1912 թ. զորացրվել էր և նորից զորակոչվել էր բանակ Առաջին աշխարհամարտի սկսվելուց անմիջապես հետո:

147 **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 8, էջ 389:

148 Նույն տեղում, էջ 389:

149 Խոսքը վերաբերում է գեներալ-լեյտենանտ **Եվգենի Գեորգիևիչ Տրամբիցկոն**–19.02.1899, Ելիզավետոգրադ– 19.04.1933 Փարիզ:

Բարձրի գնդի հարմանատարը վրացի էր, ով նույնպես յուրաքանչյուր անհաջողության համար աշխատում էր մեղադրել հայերին: Թումանյանը գրում է. «Бакинский полк»-ը փախել է: Էդ պոլկի մեծագույն մասը հայ է: Նրա հրամանատարը վրացի է՝ **Նիժարաձե** և հայատյաց: Իրեն արդարացնելու համար հայերին է մեղադրել. Թեև մի քանի հոգու հայերի գնդակահարելու դեմ է խոսել և այլն»¹⁵⁰

ՀԱՎԵԼՎԱԾ

Դեկտեմբերի 12-ի առավոտյան ժամը 5-ին, երբ բանաստեղծը և նրա ընկերակիցները դեռ պառկած էին անկողնում, լսում են թուրքերի գալու զույժը: Խունուսնցու Ս. Խաչատրյանն էին բոթը բերողը: Թումանյանն այդ պահին ավստում է, որ իր մաուզերը գիջել է Գարոյին, բայց խուճապի չի մատնվում և խնդրում է տանտիրոջից՝ Մատթեոս Տեր-Ստեփանյանից, իր համար գենք գտնել: Վստահ էր, որ մասնակցելու է մարտական գործողություններին: Վերջինս բերում է մի ժանգոտած բերդան: Թումանյանը, իբրև գենքին հրաշալի տիրապետող, գնում է այն, նշան բռնում և տխուր տոնով եզրակացնում. «Անպետք բան է: Այս իմ մաուզեր»: Դեկտեմբերի 12-ին սկսվում է Սարիղամիշի նշանավոր կռիվը: Դեկտեմբերի 13-ին **Բարդուսից**¹⁵¹ գալիս են **Քեռու** խմբի հայ կամավորներից և տեղեկացնում, որ թուրքերը 8 վերստի վրա են, և պատմում են իրենց անհաջողության մասին: Ժողովրդի մեջ արդեն սկսվել էր խուճապը: Եվ դարձյալ, այս էլ որերորդ անգամ ռուս գեներալները թույլ չեն տալիս, որ հանձնախումբը հանդիպի հայ կամավորներին: Փաստորեն խումբը պարտադրված վերադառնում է ժամանակից շուտ՝ դեկտեմբերի 13-ին կամ 14-ին: Ռուսական զորքի նահանջի պահերին ռուսական հրամատարությունը հայերի նկատմամբ «բարյացակամ» էր դառնում, քանի որ մեծանում էր նրանց անձնագրի կռվի նշանակությունը: Այլևս ռուսները չէին կամենում խոսել հայ կամավորների «թալանի» մասն:

2 (ժԲ) Գարսի, թիվ 2 (46) ապրիլ-հունիս, 2014

Այսպես՝ դեկտեմբերի 13-ին հանձնախմբի մի մասը՝ Թումանյանն ու Շիրվանզադեն, Հ.Խունուսնցը և Խորեն եպիսկոպոսը Սարիղամիշից Ալեքսանդրապոլ, այնտեղից Թիֆլիս են վերադառնում՝ չհասնելով ռազմաձակատի գիծ մեկնելու և հայ կամավորական ջոկատներին հանդիպելու իրենց նպատակին: Եվ նրանց խանգարեցին ոչ միայն քրդերը, այլև ռուս գեներալները: Իսկ դեկտեմբերի 14-15-ին Թումանյանն արդեն Թիֆլիսում էր: «Մշակը», որ բացարձակ լռություն էր պահպանել հանձնախմբի մեկնելու պահին և չէր հիշատակել Թումանյանի ու մյուս աշխարհիկ անդամների անունները, այս անգամ՝ դեկտեմբերի 16-ին, ընթերցողին շտապում էր տեղեկացնել. «Թիֆլիս վերադարձան Սարիղամիշից Հ.Խունուսնց, որ գնացել էր քաղաքների ինքնավարության կողմից սննդական կետեր հաստատելու, և Շիրվանզադեն ու Հ. Թումանյանը, որոնք գնացել էին Հայկական բյուրոյի (Ազգային բյուրոյի) կողմից: Վերադարձել է նաև Խորեն եպիսկոպոսը»¹⁵²:

Բանաստեղծը վերադառնում է Թիֆլիս՝ չկարողանալով լինել ռազմաձակատի առաջին գծում և անձամբ գրուցել հայ կամավորների հետ, սակայն հանդիպում է ռուս գեներալների երկդիմի վերաբերմունքին, ավելի հաճախ՝ նրանց վարած ոչ հայանպաստ գործողություններին, հենց ռուսական զորքի կողմից իրականացվող թալանի երևույթներին, հայ ավերված գյուղերի ողբերգությամբ: Գրողի դուստր Նվարդն իր հուշերում շփոթելով Թումանյանի վերադարձի օրը, գրում է. «Դեկտեմբերի 25-ին վերադարձավ ռազմաձակատից ծանր տրամադրությամբ, զարհուրելի տպավորություններով, ժողովրդի ողբերգական վիճակի մասին պատմում էր սարսափելի մանրամասնություններով»¹⁵³:

ՎԷՆ համահայկական հանդես

150 Թումանյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 389:

151 **Բարդուսը** Կարսի մարզի Օլթիի օկրուգի գյուղ է՝ Օլթիի աջակողմյան վտակներից մեկի ակունքների շրջանում, բարձրադիր վայրում: 1907-ին ուներ 639 հույն բնակիչ, որոնք տեղահանվեցին Առաջին աշխարհամարտի տարիներին: Համապատասխանում է պատմական Պարսեզ ավանին:

152 «Մշակ», Թիֆլիս, 1914, N 284, դեկտեմբերի 16:

153 **Նվարդ Թումանյան**, Հուշեր և գրույցներ, Եր., 2009, էջ 117: Հնարավոր է, որ դեկտեմբերի 25-ին Թումանյանը պարզապես սկսել է պատմել իր տպավորությունները:

Այս ուղևորությունը Թումանյանի կյանքում Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքի առումով որոշ իմաստով բեկումնային էր: Վիթխարի էր հիասթափությունը: Նա իր աչքերով տեսավ պատերազմը, թուրք-քրդական համերաշխությանը իրականացվող ցեղասպանությունը, որին անմասն չէին նաև ռուսական որոշ գեներալներ, ովքեր՝ իբրև ցարական Ռուսաստանի իրական քաղաքականության կրողներ, իրենց գործողություններով ու ռազմավարությամբ նպաստում էին հայության դեմ նյութվող և արդեն իրականացվող ոճրին: Առաջին անգամ չէր, որ Թումանյանը բախվում էր Ռուսաստանի գաղութատիրական քաղաքականության հետևանքներին: Լինելով «Դաշնակցական գործով» 149 անմեղ մեղադրյալներից մեկը՝ չորս-հինգ տարի շարունակ պահնորդական բաժնի հսկողության տակ, երեք անգամ կալանավորվելով, բանտային կյանքից ուժասպառ՝ նա իր մաշկի վրա էր զգացել ցարական պատժիչ մեքենայի հարվածները, բայց այնուամենայնիվ, չէր փոխել ռուսական կողմնորոշումը: Այս անգամ տեսածն ավելի սարսափելի էր, քան տարիներ շարունակվող իր և հայ մտավորականության լավագույն մասի քաղաքական հավաճանքները: Եվ եթե մինչ առաջին այցելությունը ռազմաձակատ՝ նա իրար հետևից հողվածներ էր գրում, որոնցում արտահայտում էր Ռուսաստանի օգնությամբ արևմտահայության ազատագրման իր համոզմունքն ու հավատ ներշնչելով՝ խանդավառում էր հայ զինվորին, ապա ռազմաձակատից վերադառնալուց հետո որոշ ժամանակ լռություն էր պահպանում:

Թումանյանը մի քանի ամիս անց իր մեջ ուժ է գտնում վերստին խոսելու և հույս ներշնչելու, քանի որ Աբացիևի կողքին տեսել էր նաև Օզոլ, դասալիքների, թալանչիների կողքին նաև՝ օգնության ձեռք մեկնող, հայի վիշտը համազգացող, գաղթական երեխաներին օրերով իրենց դիրքերում պահող զինվորների: Ազգային գործիչ լինելուց բացի նա պոետ էր և իր ողջ նկարագրով, գրական և հասարակական գործունեությամբ՝ հայ ժողովրդի կենսունակության ու կենսասիրության խորհրդանիշը: Հենց այդ պատճառով վերադառնալով Թիֆլիս՝ թե՛ արվեստում և թե՛ հրապարակագրության մեջ Թումանյանն իր ջանքերն ուղղեց ճշմարտության հաղթանակի և սեփական ձակատագիրը տնօրինելու հանդեպ ազգի հավատի վերհառնումին:

Սուսաննա Գ. Հովհաննիսյան– հայ մշակույթի և գրականության պատմությանը նվիրված շուրջ 200 գիտական հոդվածների հեղինակ է: Դրանք նվիրված են Սայաթ–Նովայի, Ն. Աղբալյանի, Գր. Զոհրապի, Լ.Շանթի, Կոմիտասի, Ղ. Աղայանի, Դ.Դեմիրձյանի, Ավ. Իսահակյանի, Վ.Տերյանի գրական ժառանգությանն ու գործունեությանը: Համահեղինակ է Թումանյանի կյանքի տարեգրության առաջին հատորի (2010) և Թումանյանի մասին երեք մենագրությունների՝ «Հովհաննես Թումանյանը և Հայ գրողների կովկասյան ընկերությունը» (2007), «Պատմություններ Թումանյանի կյանքից» (2010), «Հովհաննես Թումանյան. կյանքը և ստեղծագործությունը (1900–1912)» (2012):

Summary

EVERYDAY LIFE OF THE FIRST WORLD WAR

Based on diary entries of Hovhannes Tumanyan from November 17 to December 12, 1914

Susanna G. Hovannisian

The article presents a notable episode concerning the writer's activities – a trip to the front on the 15th November, 1914 together with Mesrop TerMovsian, Shirvanzade, with Khoren Muradbekyan, leader of the school Nersisian Hovsep Hununts and others. Some interesting information has been saved in the diary concerning the events taking place from 15 November to 12 December 1914, the meetings of the writer with the soldiers and officers of the Russian army, in particular with Abatsiev, Lyakhov, Lebedinsky, Solonenko, Trambitsky, also with General Drayagin, the subject of these meetings concerned number of cases of unfair treatment with the volunteer groups and the population of western Armenia.

Резюме

ПОВСЕДНЕВНОСТЬ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

На основе дневниковых записей Ованнеса Туманяна с 17 ноября по 12 декабря 1914 года

Сусанна Г. Ованнисян

Статья представляет примечательный эпизод деятельности Ов. Туманяна – поездку на Кавказский фронт вместе с Месропом Тер-Мовсисяном, Ширванзаде, Хореном Мурадбекяном, руководителем школы Нерсисян Овсепом Хунунцом и другими армянскими деятелями. В дневнике поэта сохранились интересные материалы о событиях с 15 ноября по 12 декабря 1914 года, о встречах писателя с солдатами и офицерами русской армии, в частности, с Абациевым, Ляховым, Лебединским, Солоненко, Трамбицким и генералом Драгиным. Встречи касались ряда случаев несправедливого обращения по отношению к добровольческим группам и к населению Западной Армении.

ՀԱՉԵԼԻՑՆԵՐ

Հ (ՃԲ) քարթ, րիւ 2 (46) արիւ-հուիւ, 2014